9(47.925)
Զ-55



# ԳԻՐՔ
## Պատմութեանց Երկրին Տարօնոյ Արկչէ Զենոբ։

1157 ԹՎ. †:

40404
257

1708 թ.

Բան Սակաւուկ Առ Բարեմիտ Ըն-
թերցողսդ։

Յորժամ նիւթ իմն պատճառական
ենն, յերկրէ հեռաստանէ գտա-
նիցի 'ի տեղւոջ ուրեք, ըստ բնածին
բուսոյ բարուց բանականութեն գիւն
գործելք մեծաւ ջանիւ և աշխատու-
թեն բաւականս յանձն առեալ փու-
թաձեց լինիմք 'ի տեսութեն ազնըւու-
թեն նորին. զի զնորին չքնաղագեղ գե-
ղեցկութեանն զվայելչութիւն առ բերել
կարիցեմք յընթացարան իմացմանս մե-
րոյ։ Այժ ընդէր։ Զի տեղին՝ յորմէ
ազնիւն այն է ելեալ՝ վասն իբրացեալ
գոլոյն՝ ոչ ամենեցուն հասարակացե
դիւրապէս գնալի. այլ որեաց ոմանց
և յուժ սակաւուց. և այն բազում
ծգամբք և աշխատանօք։

Որդ՝ ենթէ 'ի տեսութեն նիւթականաց
այնքան ըղձանս երկնեմք, քանի՞ ապա
զնոյն փոյթ գերազանցապէս բերել
պարտիմք 'ի յանձին մեր վայելման զերկ

Է                                   նա

### * Բան առ ընթերցօղդ ։

Նախայլ գեղեցկութի՛ հոգեկան ազ-
նըւացն · որոց՝ յերկրականացս կայս-
ցանէ ոչ ինչ համեմատի ։ Արդ ո՞րք են
արդեօք ասացեալքս ։ Ահա ա̃ծային
գրոցն տեսութիւնք · որոց անվատնելի
պայծառութիւնքն շողշողեալ գեղա-
փայլին 'ի միտս ընթերցասէր անձանց ։
Արդ ո̃պ նիւթական աղնըւացն 'ի հե-
ռաւոր եկելոց զանազանք են տեսակք,
այսպէս և բանք հոգեւորց գրոցն զանա-
զանս ունին տեսակս · զի ոմանք են ա̃ծ-
բանութիւնք, ոմանք բարոյականք, ոմանք
վիպմունք · և այլք այլ ինչ ։ Արդ սոցա
յանէ 'ի հեռաւոր գալ · զի թէ ա̃ծա-
բանութիւնք իցեն՝ ճառեն զանճառելի
էութենէ անեղ գոյին ա̃յ · որ բարձր է
քան զա̃մ և հեռի յա̃մ էից ըստ անեղ և
անհաս գոլոյ ։ Արդ թէ բարոյականք,
վարդապետեն զառաքինութենէ · որ
բարձր է ըստ պատճառոյ, և հեռի 'ի վայ-
րաքարշ վարուց վատթարաց ։ Իսկ է
թէ իցեն վիպմունք՝ նորին ևս 'ի հե-

* Բան Ի՛ Ընթերցօղսդ ։

ուսուտ գան առ մեզ. զի վկայմունք՝ ոյքեն պատմութիք՝ միշտ զանցելոցն պատմութեանէն ։ քանզի գործ պատմութեանն է ծանուցանել զեղեալ իրն. որ փակի ընդ անցեալ ժամանակաւ ։

Իսկ շահաւէտութիւն նորին այն է, զի զեղեալն 'ի վաղ ժամանակաց՝ կացուցանէ առաջի աչաց մերոց. այնպէս, որպ թէ այժմ իցէ եղեալ ։ վասնորոյ ասէ ումն իմաստասիրաց թէ պատմութիւնէ վկայ ժամանակաց. լոյս ճշմարտութեան. կենդանութիւն յիշողութեան. վարդապետ կենաց՝ և ծանուցիչ հնութեան ։ Արդեամբ եթէ ոչ պահէր պատմութիւն 'ի միտս մեր զանցանակ եղելոցն, մոռանայաք զնոսա դիւրապէս ։

Բյլարդ՝ տեսակք պատմութեանց եւ զանազանքեն. զի ըստ բազմատեսակ ներգործութեանց՝ բազմատեսակք լինին և պատմութիւն ։ Ոմանք խօսին զըստեղծագործութենէ և զըսքանչելեաց արարչին. ոմանք զառաքինութենէ ճր-

*Բան Առ Ընթերցօղաց :

գանց երանելի անձանց ։ ոմանք զմը-
տամնոտոցն թշնաւու է · և ոմանք զայլ-
նիչ ։ Առաջինն ծանուցանէ զանբաւա-
զօր մեծութիւն և զամենակարող տրու-
թիւն ամենութեան ։ Երկրորդն յորդորէ
լինել նախանձաւոր գործոց բարու-
թեն ըս արանցն երջանկաց և Երրորդն
վարդապետէ խորշիլ և խոտորիլ յան-
երջանիկ գնացից եղկելեացն ։ Է և այլ
ինչ տեսակ պատմութեն, որ վիպելով
զիրս աղտեղիս՝ բառնայ զբարեզարդ
համեստութիւնն՝ի հոգւոյն ։ Այլ մեր
բանս՝ ոչ է այնպիսեաց սակս ․ որք ան-
հպելիք են ամենևին՝ի շրթունս և ի լսե-
լիս հաճառոտացելոց ։ Այլ զայնս ասեմ,
որք (զինչ և իցէ՝) բողբոջ իմն պտղաբե-
րութեան տնկեն՝ի յոգւոջ
՝ի լսելն իւրեանց ։

Ապ և այս առաջիկայ պատմութիւնս է ․
որ կոչի Զենոբ ․ և պատմէ զոմանս
գործեցեալս առ Լուսաւորչաւն մե-
րով և առ իշխանօքն հայոց յերկրին



տա

## *Բան Առ Ընթերցողդ.

տարածոյ. Նաև զբերել Լուսաւորչին մերոյ զամենամաքուր նշխարս Յօհաննու կարապետին և Աթանագինեայ վկային՝ յերկիրս հայոց։ Եւ զայլս ումանս. զորս գտցես 'ի Ցանկի սորին որ կայ եդեալ 'ի վերջնումն.

Եւ թէպէտ սբն Գրիգոր՝ պատմութիւն ասորւոց անուանեաց զսա, զորոյ զպատճառն լուիցես յիւրում տեղւոջն. սակայն ըստ հասարակաց Օրինաց անուանի. և պատճառն է, զի 'ի զննութեան ասորւոց եպիսկոպոսէն եղև գրեցեալ՝ հրամանաւ Լուսաւորչին։ Վասն որոյ անուամբ շարադրողին կոչեցաւ և շարադրեցեալն.

Որպ եգրեցեալն Ագաթանգեղոսէ՝ Ագաթանգեղոս կոչի և այն։

Արդ՝ ընկալարուք զսա հոգևորական ըղձանօք. և փառս վերառաքեսջիք այնմ՝ որ արար զամենայն.

Եւ է օրհնեալ անզրաւ յաւիտենիւ.

Ամէն.

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՐԿՐԻՆ ՏԱՐՕՆՈՅ։

Զոր գրեաց Զենոբ ասո
րւոյ Եպիսկոպոսն. Հրա
մանաւ Լուսաւորչին
Մերոյ Սրբոյն
Գրիգորի.

Պատմողական այսմիկ տա ռիս.
Ականջադրուկ թէ եղի ցիս.
Կոչել գործոց մերոյ տոհ միս.
Տեղեակ ումանցն առ լինի ցիս։
է Պատ



Պատմեցից յառաւօտու զողորմութիւն քո․
և զճշմարտութիւն քո ՚ի գիշերի։

1234

Պատճէն Առաջին Սրբոյն Գրիգորի
զոր գրեաց եւ յղեաց ի Կեսարիա առ Սբ.
Հայրապետն Ղեւոնդէս։ I

[illegible]

Ա Հեալ եւ ի մարդկանէ փառաւո
րեալ, երիցս երանեալ տէն

և ամ̃ծարեալ սրբոյ Հայրպ̃տիդ Ղևոն
դեայ․ և հոյակապ քաղաքիդ կեսա
րիոյ՝ մեծարգոյ և պատուական քահա
նայպ̃տիդ։ Ու 'ի ձեր սրբոյ ձեռնադ
րութենդ և 'ի մեր փանաք իմաստու
թեան՝ առաջին թուղթ ողջունիւ և սր
բութ̃ե հասցէ ձերում փառաւորու
թ̃եդ, և ապա բոլոր տիեզերաց։
Յետ գոհանամ զԱ̃յ, որ հայրախնամ
ողորմութ̃են իւրով գթացաւ յազգս
մ̃րդկան իմաստամբ որդւոյն իւրոյ միած
նի․ որ զԱ̃մ ազինս հրաւիրեաց յերկ
նային քաղաքն 'ի ձեռն առաքելական
քարոզութ̃են։ Յորում այսմ աշխար
հի կարծ առաւելն մասն պարծանաց
էհաս․ զի երկոքեան ամոլքն սոտ ե̃
կեալ՝ սորին սահմանի մկրտ̃ կեցան՝ հո
գւոյն բանիւ, 'ի ձեռն նորին շնորհացն։
Իսկ թէպէտ և առնոքօք վերջացան 'ի
ճշմարտութ̃է, սակայն կամք ողորմու
թ̃են Ա̃յ գթացաւ առ մեր նըճաստու
թիս․ ըստորում և գործեաց սքանչե
լիս 'ի մերում ժամանակի․ զորոց որի



նակն

նակն գուք 'ի մէնջ իսկ լըճայք և ծա
նեայք ։ Անաճանդ կրկին գոհութին
ձեզ մատուցանեմք այ ։ առաւել և
ձեզ որհնութին ։ զի զգանձն կենաց
շնորհեցիք երկրիս հայոց ։ զմիջնորդն
այ և մարդկան ։ զնշխար սրբոյն յօհան
նու մկրտչին ։ որև ցնծայ յոյժ եր
կիրս հայոց աք գալստեամբ սորին ։
որպէս և անդ ջր գալստեամբն
'ի յորդանան ։

Որ զայս գիտութին ստուգիւ ձեզ
ծանուցանեմք ։ զի որպէս անդ ջր իջ
մամբն 'ի ջուր՝ մահ կորեաւ, նոյնպէս
և աստ 'ի սորա գալստեանն՝ գժոխոց
դրունքն խորտակեցան ։ Զի է աստ
յերկրիս հայոց 'ի չորրորդ բաժինս և
յերրորդ հայոցս աճարութն, 'ի լերինն
որ կոչի տորոս՝ և հաստեալ անց է մին
չև 'ի դրունս պաղհաճոյ պարսից ։ և
ստ սոյլաճ բնակի երկիրն մամիկո
նէից ։ և սա բաղկեալ վայելուչ տեղեօք
կայ յերկուս տեղիս ։ Որ այնչափ որ
ջացեալէր 'ի մերում վայրի, մինչև 'ի

որբոյ հոգւոյն յայտնեալ՝ եԹէ նա
իսկ է դուռն դժոխոց. զորոյ զտեղին
բնակնեան կոչեն Հնդիկք և պար
սիկք. յոր պանծային յոյժ բնակիչք
երկրին վս կռոցն գիսանեայ, և նոյին
եղբօրն գեմետրեայ. ուստի յոյժ թու
նեալ էր սատանայ 'ի նմա: Կործանե
ցաք զպատկերսն սատանայի, և եդաք
'ի նոյն տեղւոջ 'ի մարմարիոն մատրա
նի զնշխարս սրբոյ կարապետին յօհան
նու, և աԹանագինեայ վկային: ուստի
'ի վայր կործանեցաւ մահ խռովել կա
րողուԹեամբն. և այժմ ած երկրպա
գեալ պատուի 'ի նոյն բնակնեան տե
ղւոջն: Աղոթի անդ զերկոսին կենդա
նիսն, զանտօն և զկրօնիդէս. զորս դու
ըստ սիրոյ քում ընծայեցեր աշխար
հիս Հայոց: որոց և եդեալ իսկ են գլ
րեանց մարմնոյ՝ կենդանւոյն ընդ ձեռ
'ի խաչ ելանել՝ վս այլոց օգտի մտաց
'ի մարմնի: զորս իբրև մարգարիտս
անգիւտս համարիմ տըեալ ինձ:
Րղ ըստ սիրոյ մտերմուԹեանց քոյ

զոր ունիսդ առ մեզ՝ աղաչեմ, զի միւս
այլեւս ընծայս մատուցանիցես ինձ ·
զի հունձք բազումք են և մշակք սա
կաւք · ուստի աղաչեմք զքեզ, զի հան
ցես մշակս 'ի հունձս յայսոսիկ ։
Մ՛ին 'ի մշակացն զորս խնդրեմք 'ի
քէն՝ եղբարզարմօք · և միւսն՝ եղբայրն
յակոբայ առաքելոյ · զոր օծել ձեռնա
դրեցի եպիսկոպոս մամիկոնէից տանն ·
ա՛րդ՝ և զդա՛ յղեսցես հանդերձ այլ
մշակօք ։ Մ՛անաւանդ՝ յղեսցես և զտի
մօթէոս ազդենացւոց եպիսկոպոսն ·
զորոյ դու իսկ գովէիր զհմտութիւն
դպրութեանն · և է յոյժ իսկ պիտանի
երկրիս մերում · օգնականութիւն գը
տեալ 'ի քէն աղօթիւք և խրատուց ։
Ուստի յարաժամ ճգնութե̃դ բազ
մաց օրինակ գոլով և դաստիարա
կելով շնորհիւ տն̃՝ ողջ լինիր
բաւական բազմաց օգ
նութե̃ 'ի տ̃ր , և մե
րոյ բարեխօսու
թեամբս ·

Ժ̃Է ամէն ։ Մատ

✠

Պատճէն Երկրորդ՝ և պատասխանի
թղթոյն Արքոյն Գրիգորի. զոր
յղեաց կեսարու Հայր՟պետն
՚ի ժամ վախճանին
իւրոյ: 2

Երջանիկ և ած՟արեալ տն՟՝ և մե
րոյ եղբօրդ՝ էհաս առ մեզ նր՟
և ուրախարար գիր. և յոյժ անթերի
ուրախութբ՟ էլից զմտացնեալ անձն
իմ. որ թէպէտ վն՟ տրտմութեն՟դ հա
սելոյ ՚ի վշտնէի, սակայն շարժեաց ըզ
մեր դանդաղութիւնս ձեր գոհութե՟
նամակն. զոր ընթերցեալ գոհութե՟ս
մատուցաք այ՟ ըստ գրեցնլուն՟ ՚ի քէն.
թէ ոչ անտես արար ած՟ զազգդ հայ
կազնեան. որք զըկեալք բազում ժա
մանակս ՚ի ճշմարտութենէն՝ զմոլորե
ցուցիչս իւրեանց՝ ած՟ համարէին. և
զայն՝ ուսոյց նոցա հակառակամարտն
ճշմարտութե՟ սատանայ. զի ընդ խա
ւար ընթացեալ՝ զըկնլք ընէին յած՟ա

ծանօթութեանցն։ Մ՛զ'ի դէպ եկեալ
նոյ մարգարէին բան, թէ ժողովուրդ
որ նստէր 'ի խաւարի՝ ետես զլոյս մեծ
ած գիտութն։ Ոչ թէպտ'ի վաղ իսկ
եղև ծագեալ արեգակն արդարութն
ընդ արարածս, սակայն ազգ.քո'ի մը-
ճըմջեն իբրև'ի գիշերի յենուլն յորմ
խարխալեալ։ Այսուհ և այժմ դեռ
հայեցաւ 'ի դուսա ած և էջ փրկել 'ի
ձեռաց անմարմին փարաւօնի ։ Ոչ
վերագոյն գոտար տանջանօք.քան զնմ
սէս, ոչ խնայելով'ի միմինդ.քո. մինչև
ազատեալ զդուսա հանէր յանապատ
սինա յանկոխն գաղանաց. ուստի հա
լածական լինին ցաւք և հեծութիւք։
Արդ՝ վասն զի քև եղև ծագեալ
'ի դուսա արեգակն արդարութն ք՛ս,
և դու ընտրեցար 'ի տեղի ընտրելոց
որբոց առաքելոցն բարդողիմէոսի և
թաթէոսի, յիշեմ զնոցա նահատակու-
թիւնն. և մի երբեք վերջացիս'ի շաւ-
ղաց նոցա. զի ետ զդուսա մր'ի լինել,
և ոչ 'ի քակել. բան զի և'ի սկզբան իսկ

 եմուտ

ե․ Մուտ կամրպետդ յաշխարհդ հայոց ։
որեւ զիմ անձնս գրեսջիր 'ի քծ դըրկ
բութեդ․ եւ գրեսցես, զի այնու մասն
որհնութեն ընկալայց յետ քոյ ։

Այլ եւ խրատ բարեաց տամ ձեզ․ զին-
նակնեան տեղիդ՝ վոր բարեբուղխ
ասեն ոմանք՝ չլինեսջիր բնակութեն դա-
սուց կրօնաւորաց ։ եւ կացուսցես ըզ-
նոսա ըստ օրինակի այսոցիկ կրօնա-
ւորացս, զորս տեսեր 'ի մերում վիճա-
կիս ։ Որ եւ 'ի սրբոյն անտոնէ ուսջիր
զկարգ ճգնութեան․ զի ոչ ինչ պա-
կաս է քան զաւսջինն անտոն․ որ եւ ես
քեզ օգնութիւն համարիմ զայն ։

Զեպիփին աշակերտ սրբոյն անտոնի
հաւանեցուցի գալ 'ի նոյն խննակնեան
տեղին ունելով ընդ ինքեան քառա-
սուն ընտիր արս ճգնաւորս եւ խարազ-
նազգեստս․ պարկեշտս վարուք եւ հը-
րաժարեալս յաշխարհէս ։ Որդ՝ առէլ
զեպիփան կացուցես վերակացու՝
դոցա եւ այլոց եղբարցն ։ Եւ դրոշմես-
ջիր արձան յաւէտենից, զի մի ոք 'ի դա-

սակերտս կմ՛ ի գիւղաքաղաքս զօրէն
աղէքսանդրացւոցն գործեսցէ . շինե
լով իւրաքանչիւրոք զտրունեան տա
ճարն և առանձին բնակել ։ Իսկ ժողո
վեսցես՛ ի նոյն տեղին՝ հարիւր արանց
չափ . և որոշեսցես նոցա գեօղս և ա
ճանս մեծամեծս . որպէս զի պէտք վա
նացն՛ ի նմին վճարեսցին . և ինքեանք
միայն աղօթից և ճգնութեան պարա
պեսցին ։ Յարատեւ և զիշխանսդ զա
գաւիկ՝ լինել եկեղեցաղորդս՝ աղքա
տանէրս՝ կրօնաւորանէրս՝ և երկիւ
ղածս յոյս ։ Իսկ որ լինեալ մատրանն մի
շինեսցես՛ ի բնակութիւն կրօնաւորաց .
այլ՝ կացուսցես՛ ի նմա քահանայս և
քոր եպիսկոպոս ։ Որոշեսցես՛ ի նմա
դասակերտս և շինեսցես աղքատա
նոցս ԺԲ զի որք գայցեն՛ ի բժշկութիւն
մի լինիցի տրտունջ՛ ի նոցանէ . և տա
դրան խորանին ննջեցուցանէին զուխ
տաճարն ։ զայս ամենայն՝ ըստ այժմ
օրինակի տուր գործել ։
Լըս վն տիմօթէի և եղիազարու ե
ժէ Ի. պլս

պիսկոպոսացն զորս յինէն աղաչանօք
էիր խնդրեալ՝ պարտէ գիտել, զի նք
յայնժամ էին գնացեալ՝ յորժամ զբա
գինսն կործանեցեր, և մեզ պատաս
խանի հայցմանէիք արձակեալ։
Բայց զի եղխազար գնաց ՚ի քաղաքէ
իւրմէ փախըստական. զի յարեան ի
վր նորա հերետիկոսայքն և հալածե
ցին զնա ՚ի կողմանս հռոմայ։ Իսկ ըզ
ախմօթենոսէ լըման թէ գնաց ՚ի կող
մանս երուսաղէմի վն թարգմանելոյ
զաւետարանն ՚ի հելլենացի գիր։
Այժմ ես իսկ ՚ի ցաւս մահու հասեալ
կամ. և ոչ գիտեմ զերկարութիւն
կենաց իմոց. և վասնայսորիկ դանդա
ղիմ և գրել առ նոսա թուղթս և ծա
նուցանել զնշան բանից ձերոց և ըզ
տեղեկացդ վայելչութիւն։ Այլ առա
ճել գրեսջիր սուգիճ եթէ զինչ էր
պատերազմն ձեր և քրմացն, մինչ եր
թայքն ՚ի մէնջ։ Պարձեալ՝ ցոյց և
ըզնշխարացն վայրս ծածուկ դրով.
զի մի թերութիւն լիցի լողացն. կար

 ծե

ծելով եթէ յերևելիս չեն։ Ի՛ւլ ըզ
մեսչ եթէ գիտել կամիք, որպիսութեն
մանրու այն ունիմք և կենաց վըճար
ման։ Բայց թէպէտ արտաքին մարդս
մեր ապականի, սակայն ներքինն զկե
նաց նորոգումն ստանի։ Այլ զմեր
պակասութիւնն տացէ ձեզ տ̃ր ա̃ծ
մեր, զանձամբ առեալ հօտդ՝ 'ի բանա
ւոր փարախն վերին սիօնի փոխարկել։
Ինկև աղօթիւք քովք և 'ի մեր հօտս
խնամայեսցէ քո • զի յերևիլ հօտա
պետին՝ առցուք և մեք վարձս
ըստ առաջին մշակացն•
ող̃ջ լերուք 'ի տ̃ր։

✠

Ներել պատգամաւորացն զթուղթն
առ տ̃րն գրիգոր։

---

ՍԱԷ խերև դարձան պատգամա
ւորքն առ տ̃րն գրիգորիոս՝ ոչ
գտին զնա 'ի տարօն. այլ անցեալ զնա
ցին 'ի կողմանս հաշտենից յարարա

ժ.թ տեան

տեան գաւառն 'ի վողարշապատ քա ղաք. և հանեալ զնամակն մատուցին նմա առաջի ժողովրդեանն: Զոր ըն թերցեալ՝ տրտմեցան յոյժ հանդերձ Թագաւորաւն. առաւել վասն հա լածանացն եղիազարու և հեռանա լոյն յերկրէն իւրեանց: Եւ գրեաց սրբն գրիգոր հանդերձ Թագաւորաւն և չորեքին գահերէց իշխանօքն՝ առ Ե ղիազարոս Նի սորացւոց եպիսկոպոսն, և տիմոթէոս ագգենացւոց եպիս կոպոսն օրինակ զայս:

✠

Պատճէն Երրորդ, զոր գրեաց սրբն Գրիգոր առ Եղիազարոս և Տիմոթէոս: 3

Տ̃Ն սիրեցեալ եղբարցդ և հեռա ցեալ մշակացդ մ̃ն բանին կե նաց՝ 'ի մ̃ր ողջոյն առեալք հան դերձ մ̃րդատաւ և մ̃մ իշխանօքս:

Ամենայն ոք որ զա̃ծային մշակութիւն ի յանձն

յանձն առնուլ՝ հալածական պարտի լինել • զի ոչ առ ամենեսեան ընդունելի է նորա քարոզութիւնն • որպէս այժմ զձեզ նոյն լսէաք ։ Զի ելեալ 'ի ձերմէ բնակութենէդ՝ յանձն առիք լինել օտար 'ի վայրից և ծանօթից • ոչինչ զմտաւ ածելով զպանդխտութեն ժամանակս • այլ դէմ եդեալ գնացիք և ոչ գիտէք յոմ չոգայք ։

Արդ՝ վ̃ս պանդխտութ̃եդ երանեմք ձեզ • իսկ վասն իմաստութ̃եդ ոչ • զի մինչ գիտէիք զԹագաւորս քն̃ական հաւատով լցեալ, և զաշխարհս ան̃ծ պաշտութե̃ ,յոտար և'ի տարադէմ երկիրդ ընդէ̃ր եկէք հալածական ։ Մանաւանդ՝ զի գիտէիք թէ ամենայն գաւառացս եպիսկոպոսք պիտոյեն և քհ̃նայք ։ զի թէպէտ ումանք ուստեք ուստեք եկեալ ժողովեալեն , բայց զի̃նչ իցեն այսքիկ առ վեց հարիւր քսան գաւառս հայոց • յորոց իւրաքանչիւր գաւառի մենմի քահանայ կամ երկու՝ լռւկ թէ հանդիպի ։ զի



դեռ

դեռ մանկունք երկրիս 'ի դպրոցին. և ոչ 'ի նոցանէ որ քաջ ճակատեան է քահանայութեն: Իսկ դուք այդչափ քահանայս առեալ՝ տարադէմ և հեռի ուղեփնացութեն ետուք զձեզ:

Բայց արդ՝ 'ի ձեր երկիրդ այլ չունիք դառնալ. ապա աղաչեմք զձեզ, 'ի մէնջ մի՛ մերժանայք. այլ ըստ վստահութե փութացարուք գալ զկնի արանցդ զորս յղեցաք առ ձեզ: Բայց եթէ գայցէք, զամ երկիրդ եկեղեաց և հարքայ՝ առաջի ձեր ածեմք. յոր միաձայն և ընտրեսջիք՝ ձեր եղեցն այն, և որոց զկնի ձեր. որչափ կենդանիք դուք և մեք: Իսկ երկիրն Մամիկոնէից՝ եթէ հաճոյ թուեսցի ձեզ, որպէս և դուխս ասէիր եթէ զԻննակնեան տեղին ինձ տուր. և անդ զքո եղբայրն իսկ իմ ձեռնադրեալ է եպիսկոպոս. և ըստ կարգի աղաչանաց՝ զանուն տեղւոյն փոխեցաք յիւր անձին անունն:

Բայց ալմ․․աի ջերմագոյնէ 'ի սպասաւորութեն մեր կարապետին, մինչ զամ



չին

շինուածս տաճարին քար և կիր է ե-
դեալ: և թըռչի թէ մինչև 'ի մահ ուժեք
չկամի տալ: Օր և մեզ ոչ է արժան
առնուլ 'ի նմանէ. զի աշխատեալ է 'ի
նմա առանց այլոց սատարութեան: Ինքն
շինեաց զեկեղեցին. զոր ես՝ միայն
հիմնարկեցի: Սակայն եթէ ինքն տացէ
'ի մէնջ լինելէ. զի այլ ևս յաճելում 'ի
գասակերտս. Ապա եթէ այն ոչ՝ ամ
երկիրն առաջի ձերէ. զոր ետեսանէք
տեղի վայելուչ, այն ձեզ: յորում
ոչինչ պակաս գտանէք 'ի մէնջ
քան զասացեալն: * Ողջ
լերուք 'ի տր:

✠

## Առաքումն թղթին:

Եւ առաքեալքն այնորիկ ոյք է-
կին 'ի կեսարիոյ, առեալ ըզ
թուղթն 'ի մէնջ տարին 'ի յուրհա և
'ի կեսարիա. և ոչ գտին զնոսա. և
այս եղեալ գնացին յերուսաղէմ. և
չհանդիպեալ նոցա՝ տեղեկացան ըզ


նո

Նոցանէ թէ երկոքեանն իմիասին 'ի Հռոմ էին գնացեալ. վասն որոյ գնացին և նորա 'ի Հռոմ, և ոչ անդ գտին զնոսա. զի եղիազար 'ի միջագետս ասորւոց էր գնացեալ վասն թարգմանութեան երկոտասան մարգարէիցն. և տիմոթէոս գնացեալ էր 'ի կորընթոս: Իսկ բեկտոր և անաստաս և գայիոս՝ եգիպտոսի եպիսկոպոսքն իբրև տեսին ըզթուղթն՝ ուրախ եղեն յոյժ և խնդացին. քանզի և նոքա հալածական շըրջէին ընդ եղիազարու: Իսկ փութացեալ գրեցին զնոյն բանսն յոյլ նամակ և առաքեցին առ տիմոթէոս 'ի կորնթոս. և կոչեցին ընդ նմա և զաքիկոս սարկաւագ, որ յոյժ հմուտ էր բազում դպրութեան. և ինքեանք ելին 'ի միջագետս և ոչ գտին անդ զեղիազարոս: Իսկ ապա դարձան յերուսաղէմ վն̃ երկուց պատճառաց. մի՝ վասն եղիազարու. և միւս՝ վասն քըննութեն աղանդոյն մենադրէի. զորոյ զպղծութեն բազումք տակաւին ու-

 նէին

նէին յայնմ ժամանակի ։ Եւ իբրեւ գնացին անդր, ոչ գտին զեղիազար ։

Եւ ՚ի նոյն աւուրս վախճանեցաւ հայրապետն երուսաղէմի ․ եւ հաճոյ թուեալ երուսաղէմացւոց՝ առեալ զգայիոս ձեռնադրեցին հայրապետ երուսաղէմի ։ բեկտոր եւ անաստաս դարձան ՚ի կեսարիա ։

Ապա եղիազար դարձաւ ՚ի միջագետաց եւ եկեալ ՚ի ճանապարհին հանդիպեցաւ սրբոյն գրիգորի եւ տրդատայ, մինչ երթային ՚ի հռոմ ․ եւ խնդացին յոյժ ։ եւ դարձաւ եւ ինքն ընդ նոսա ՚ի հռոմ քաղաք ․ եւ կացին անդ աւուրս բազումս ։

Եւ ապա խնդրեցին ՚ի նոցանէ մասն ինչ ՚ի նշխարաց սրբոց առաքելոցն ․ այսինքն գահեակ ձեռն անդրէի առաքելոյն եւ ղուկասու աւետարանչին ․ եւ առեալ զխնդրեցեալսն՝ մեծաւ խնդութեամբ դարձան յաշխարհն հայոց ։ եւ տրդատ անցեալ գնաց յաշխարհն իւր յարարատեան քաղաք ։ Իսկ սուրբն

գրիգոր մնաց ժամանակս ինչ 'ի տարօն՝ Ը լուր ունելով զնշխարս սրբոց առաքելոցն. գաղտարեալ աճուրս ի Ե 'ի վանս գլակայ յիննակնեան տեղիս գիսանեայ կռոցն, 'ի կայանս սրբոյ կարապետին յօհաննու։

Եւ ապա առաքեաց զնշխարսն մամկոնէից տանն՝ տեսանել տեղի վայելուչ և լեռնաբնակ, զի ամփոփիցէ անդ զնշխարսն. որք երթեալ խուզեցին աճուրս բազումս և ոչ գտին տեղի պատշաճաւոր յամ գաւառսն. և դարձան ունայն։ Յայնժամ Հրամայեաց տէրն գրիգոր պաշտօնէից իւրոց՝ աղօթս առնել յերեկօրեայ։

Եւ ինքն մտեալ յեկեղեցին տարածեաց զձեռս իւր առաջի նշխարաց սրբոց առաքելոցն, և առաջի տապանի սրբոյ կարապետին. և խնդրեաց յԱյ այսպէս։

Աղօթել սրբոյն գրիգորի վասն ամ
փոփելոյ զնշխարս սբյ Առաքելոյն։

✠

Տ Ած բազմագութ եւ ողոր
մած․ որ քննես զկրաճունս
եւ տաս զողորմութիւնս քո․
որ յիշեցեր զազգս մարդկան զմոռա
ցեալս ՚ի գթութեանց։ ոչ բարկացար
իսպառ, եւ ոչ անտես արարեր յաճի
տեան։ Այլ կարգեցեր զիս ՚ի պաշտօն
քահանայութեան այսմիկ․ եւ ետուր
մեզ ժամանակ՝ հատուցանել զպար
տականութի հարցն մերոց առաջնոց․
որք դիմագրաւ գտան քարոզութեան
սուրբ աւետարանին։ Որոց տիրեաց
մահ մեղաց եւ կորուստ ապականու
թե․ եւ ընկեալ մահու՝ կապեաց
զամենեսեան ընդ անիծիւք․ արժա
նացուցեալ զնս գժոխոց կայանին։
զորս հաճանեցուցեալ չարին՝ մնալ
յունայնութե իբրեւ ՚ի ճշմարտութե։
Նաեւ մեզ շնորհեցեր ծանօթս լինել


ան

անճառն քում և ժառանգ արքայու-
թեան երկնից՝ ընդ սրբոց առաքելոցն։
Դու արարեր խաղաղութիւն առ հեռա-
ւորս և մերձաւորս, զալստեամբ միած-
նի քո. և քարոզութեամբ սրբ առաքելոցն.
որք բաժանեցին զամենայն արարածս
շրջագայութեամբ սրբ աւետարանին։
Դաւանել ես յայսմ աշխարհի արա-
րեր զկամս ողորմութեան քո, 'ի ձեռն
սրբ կարապետին. որ բաժանեաց իւ-
րով մարմնովն զամենայն աշխարհս
Մանաւանդ՝ զի առաւելապէս գթու-
թիւն քո հաճեցաւ բնակիլ 'ի տաճարիս
յայսմիկ. որև առաջին հիմնարկութիւն
շնորհեցաւ ինձ յանկնարկութեան քում
մէ առնել 'ի տեղւոջս յայսմիկ։
Որ հիմն հաւատոյս մերոյ խարըս-
խեալ մնասցէ անդրդուելի. մինչև 'ի
վերջին օրն. յորում գաս և նորոգես
զսա անապական դու տր։ Դու միջ
նորդէ սա ըստ ճերերն և ճշմարտութեան։
Դու դարձեալ՝ նստելոցս սա ը աջմէ
միածնի քո 'ի փառս անճառելիս։


Դու

Կու տր զօրութեց՝ հայեաց յերկ
նից 'ի պատրաստ բնակութե քումմէ ·
և յայտնեա տեղի բնակութեան նշխա
րաց սրբոց առաքելոցն քոց՝ յերկրիս
յայսմիկ · 'ի գովութիւն մեծի տրու
թեանդ և 'ի պատիւ ածութե քոյ ·
և 'ի փառս ամենասուրբ
երրորդութեդ ։
Ամն ։
✠

## Յայտնել հրեշտակի տն սրբոյն գրի գորի՝ տեղւոյ նշխարացն ամփոփման ։

Եւ իբրև կատարեաց մեծն գրի
գոր զաղօթսն, յայտնեաց նմա
հրեշտակ տն և ասէ , յարուցեալ
գնասցես 'ի ստորոտ լերինն տարօնի,
և ցուցից քեզ տեղի, յորում հաճե
ցաւ տր բնակիլ սրբոցդ ։ Եւ նորա
խնդութբ արտաքս ելեալ՝ եառ ըզ
նշխարս սբց առաքելոցն և գնաց 'ի նոյն
տեղին՝ զոր եցոյց նմա հրեշտակ տն ·

աղօթեալ 'ի տեղւոջն՝ եւ պատրաս
տել զնիւթ շինուածոյ նոր վկայարա
նին. և եդ անդ զբերեալ մասունս սրբոց
առաքելոցն։ Եւ կարգեալ անդ պաշ
տօնեայս եկեղեցւոյն է տասան արս,
եւ զտեղին զայն՝ եղիազարու. և ան
ուանեցին զնա եղիազարու վանք։
Եւ տօն մեծ կատարեցին 'ի տեղւոջն՝
զօրն բնակութեան սրբոյն. յորում բա
զում բժշկութիւնք եղեն։

✠

## Լսել բեկտորի և այլոցն զկըս պատերազմացն ։

Արդ՝ 'ի սոյն ժամանակս՝ բեկտոր
և անաստաս հանդիպեալ
ոմանց 'ի թիւզանդիոյ՝ որք
յաշտիշատ տարօնոյ էին, և անդ եր
թեալ տային զոյց զառաջին պատե
րազմին, մինչ գայր սուրբն գրիգոր 'ի կե
սարիոյ 'ի տարօն. և թէ զինչ դար
ձան ընդդէմ նորա՝ քուրմքն որք էին
'ի տեղիսն զխսանեայ՝ Նոյնպէս տային

գրոյս և զերկրորդ պատերազմն որ
եղև Ը տրդատա և ընդ իշխանն հիւ
սիսոյ. զոր լուեալ յունաց զարմանային
ընդ քաջութիւն տրդատայ արքային
հայոց: Զայս ամենայն իբրև լուան
բենիտոր և անաստաս և ակիւղաս և
մարկեղիոս՝ զարմացան յոյժ. և ըղ
տեղի առեալ անդ ածուրս ինչ, գրե
ցին Թուղթ առ սբն գրիգորիոս՝
օրինակ զայս:

✠

Պատճէն Չորրորդ. գլ ԻԲ գրեցին
բենկտոր և անաստաս և այլքն, առ
սբն Գրիգոր: Դ

---

Սրբազան և սծարեալ և փառա
ւորեալ հայրապետիդ հայոց
մեծաց, ողջոյն 'ի տր:

Զառ 'ի սրբոյ հայրապետէդ՝ ան
Թերի սիրով և հոգեխառն մտերմու
Թե՝ զպատուական աջոյ գիր ընթեր
ցաք 'ի հռոմ քաղաքի. և յոյժ ուրա
խու

լա

խութեամբ ցնծալ գոհացաք զՔս :
Իսկ կամեցաք գալ զկնի կոչնակա
նացդ. այլ պատճառ արգելմանս մե
րոյ եղիտպամբ եղև. որ 'ի միջագետս
ընթէր. զոր 'ի գնալն մեր 'ի Հռոմ՝ ոչ
գտաք զնա անդ: Այլա Հարկ եղև վս
նորա և վս տեղեացն երուսաղէմի՝
երթալ առ նըն սիմաքոս: Իսկ ըն այ
տեսչութեանն զգայիոս երուսաղէմի
Հայրապետ Ձեռնադրեցին փոխանակ
նր որ վախճանեցաւ: Իսկ մեք աճա
սիկ եմք խրրև զանդեայ. վս զի ագդե
նացւոց եպիսկոպոսն գնացեալէ յե
գիպտոս. և Ջանս ունի Համոզել 'ի խա
ղաղութի զայնոսիկ՝ որք Հալածական
արարին զմեզ: Վան զի գրեալէ առ
մեզ նմէ, *( զքաղաքս եոուն ագդե
նացիք 'ի յիմ ձեռս. բայց նիւստրա
ցիքն ընդդէմ դարձան. մրդ՝ մնացէք
դուք խրրև զանդեայ. մինչև ես յայլ
քաղաք երթամ: ) Այլ մեք վս այնր
դանդաղեմք գալ, զի երկիրդ Հեռի է.
և մեք անկար 'ի նշձաղ կենացս և 'ի

պանդխտութենէս ։ և բեկտոր տանջին
'ի ջերմութենէ . և ո՛րքն մարկեղէս վա
տեա՛լ է աստ յաչացն ։

Բայց ա՛րդ՝ աղաչեմք զքեզ երջանիկ
մշակդ այ̃, զի հրամայեսցես միում 'ի
պաշտօնէիցդ քոց՝ առաքել մեզ գրով
զգրուցատրութիւն ձերոյ ճանապա
հորդութեն . և զգալն յերկիրդ հայոց .
և զառաջին պատերազմն որ 'ի քրմաց
անտի . և զերկրորդն՝ որ 'ի հիւսիսա
կանաց անտի՝ 'ի գնալն ձեր 'ի հռոմ ։
Յուցցես և զտեղիս նշխարացն զորս
տարեալ ես ընդ քեզ . եթէ ո՛ւր ե
դեալ ես ըն̃դ . կամ զո՛ր պաշտօնեայս
թողեր առ նոսա ։ և թէ՝ են ումեք
յայտնի * (որպէս ասեն ոմանք,) թէ
ոչ ։ Եւ կամ թէ՝ զկրօնիդ ես և վան
տօն ո՛ւրես թողեալ . որոց սրբութի̃ն
պարծին եկեղեցիք ։ Եւ կամ թէ՝
զինչ եղև եպիփան աշակերտ նոցա .
և կամ ո՛ւրէք եղջազար և զենոբ ։
Զայսոսիկ զա̃մ ստուգիւ գրեսջիր
առ մեզ՝ աղաչեմք ։ զի յերթալն մեր

առ Տիմոթէոս եպիսկ͞ոպ՝ն մարթա
ցուք տեղեկացուցանել զնա գրովն
որ ՚ի Հռովմ․ Այս ամ մեզ պիտանի է,
եւ Ձեզ ոչինչ դանդաղել։
Եւ շնորհ ՍԲ հոգւոյն մնասցէ ՚ի վր
հաւատացելոցդ։

✠

Հրամայել Սրբոյն Գրիգորի՝ Զենո
բայ աստուծոյ, գրել զխնդիրս
եպիսկոպոսացն։ Գ

Եւ իբրեւ ընթերցաւ սբն գրի
գորիոս զթուղթն, հրամայեաց
զենոբայ աստուծոյ եւ ասէ, գրեա զա
ռաջին պատերազմն, եւ զերկրորդն ըս
տուգիւ։ Եւ զնշխարացն թէ ուր ե
դան․ եւ թէ՝ ուր են անօթն եւ կրօնի
դէս, կամ ո՞վ վարին։ Բայց յականէ
անծանէ ասա ըզնշան բլրոցն եւ զլե
րանցն․ եւ զարանցն, որք ՚ի պատերազ
մին գրգռեալ՝ զկուռսն ոչ տային կոր
ծանել։ զայս ամենայն պատմութիս
գրեսցես եւ առաքեսցես առ նոսա։

Իսկ զենոբ աղաչէ զմեզ գրիգոր՝ ըս կիզբն առնել պատմութեանն նախ ՚ի մահուն խոսրովու, և անտի ոճով գրել զամս։ որում ոչ հաճանեալ մեր գրիգոր, բաւական համարեցաւ զայն միայն գրել որ խնդրեալն էր ։

Ոչ ինչ ասէ օրէն՝ զառաջին պատմութին յասորւոց թուղթն գրել, և յիշատակ հայոց ոչ թողուլ. այլ միայն զոր նոքեանք խնդրեցին՝ զայն ուղարկեսցես գրով։ Որում հաճանեալ զենոբայ՝ առեալ գրեաց առ եպիսկոպոսն ասորւոց միայն ըզ՝
զոր ինչ առ իւրեանց
սահմանօքն գոր
ծեցան ։

✠

Պատասխանի Զենոբայ եպիսկոպոսի ցուցանել զպատճէն պատմութեանն:

Յ

Տեառն և սիրելի երջանիկ եպիսկոպոսացդ՝ 'ի Զենոբայ անարժան ծառայէ առ ձեր սրբութիւնդ և հայաստանեայցս՝ յոյժ ողջոյն 'ի տր.

Յորժամ էհաս պատուական ողջունի ձերոյ գիր առաջի պատուական տր հայրապետին մերոյ գրիգորի անթերի ուրախութբ գոհացաք զնյ. զի դադարել եղև հալածանդ 'ի կողմանցդ յայդցանէ: Եւ իսկոյն հրամայեաց մեզ տրն գրիգոր՝ գրել ձեզ պատասխանիս որչափ և հարցմանդ ձերոյ էր գիր: Եւ թէպէտ ոմանք արգելուլ հրամայեցին չգրել պատասխանիս վս ձեր գալոյ, սակայն նա ոչ այնպիսի ածեալ զմտաւ. այլ աննախանձ զձեր պատասխանիս հրամայեաց յիշել գրով: Եւ դուք մի ինչ աղարտէք զսակաւ

 պատ

պատմութեանս · կամ թէ ագաթանգե ղոս զայդ ոչ լինէ · զի ես յառաջագոյն գրեցի քան զնա ։

Եւ որ զԹագաւորաց ժամանակն չգրեցի, վասն զի տէրն գրիգոր ոչ հրամայեաց այլ ինչ աւելի գրել քան ըզ հայցուածն ձեր ։ Մանաւանդ զի պատշաճ համարեցաւ զարշակունի և ըզ քաջ թագաւորաց գիր՝ թողուլ տանս հայոց · և ձեզ պատճէն պատասխանւոյ գրել ։ Սրև ինքն տէրն գրիգոր առանձնեաց զայս պատճէն՝ ասորւոց պատմութիւն ։

*Արդ՝ և ես սկիզբն այս պատմութեան՝ զձերդ եդից հարցումն ։

✠

Զենոբայ ասորւոյ, Պատասխանի Մղթոյն ասորւոյ · և Պատմութիւն վասն իննակնեան տեղւոյն · և Պատերազմին որ յարձանայ ։

✠



Սամ

Վս̃ վրէժխնդիր լինելոյն խոսրովու՝
արեան եղբօր իւրոյ արտաւանայ։

✠ II

Ընդ ժամանակս Թագաւորութե̃ն
իւրոյ խոսրով որդի վաղարշոյ՝
վրէժխնդիր լինէր մահուան եղբօր իւ-
րոյ արտաւանայ՝ յարքայէն պարսից·
և ի գոլ ը̃ միմեանս երկուց Թագա-
ւորացն, սաստկացաւ մարտ պատե-
րազմին, և զօրացաւ արքայն հայոց։
Նոքա սկսան ապականել զերկիրն պար-
սից ամս Ժ. և հիմն իվեր ջանայր առ-
նել սպանմամբ և գերութե̃ ։ և եղև
միջնորդ արքայն ձենաց և ոչ կարաց
գրաւել զսիրտ նոցա ՚ի հաշտութի̃։
Իսկ այլ ոմն անուն անակ՝ ՚ի նոյն
ազգէն արշակունեաց, խորհուրդ ա-
րարեալ ը̃դ արքայի̃ն պարսից՝ խոս-
տացաւ գալ սպանանել զխոսրով, և
իւր վարձանս առնուլ ըզպալհաւն
պարտաւայ· զոր յանձին կալեալ ար-
քային պարսից, ոչ ինչ վերջանայր պար-
թեն ՚ի սպանմանէն խոսրովու ։

 Նոքա

Եւ յարուցել տանու զեղբայրն իւր
և զկին և զորդիս, և սիրտ պատառ-
եալ և փախստեան աղագաւ գայ առ
խոսրով: Եւ 'ի կատարիլ երկրորդ
ամին` մինչ դեռ կամէր խոսրով ար-
շաւել 'ի պարսիկս, 'ի գարնանային ժա-
մանակս 'ի ժամ որոտոյն` մեկուսի ա-
ռեալ անակայ և եղբօրն իւրոյ` ընդ
խոսրով, ոպ թէ բան ինչ ասել նմա,
յանկարծակի զէնս իմն յարուցեալ`
զթագաւորն դիաթաւալ կացուցա-
նէին. և ինքեանք Ջրասոյղ եղեալ կոր-
ծանեցան իւրայնօքն ամենեքումբք,
ոչ ժամանեալ 'ի պարթեւն: Իսկ թա-
գաւորն պարսից` զոր մահուն խոսրո-
վու տոհմ կարգեաց` և զպարտաւն
տայր մնացեալ ազգին անակայ:

Իսկ` 'ի պարսից մինչ դիմեալ գայր
անակ յարտաճազ գաւառ` 'ի հան-
գիստ սրբ առաքելոյն թադէոսի, ընդ-
լեալ ասեն զյղութիւն սրբոյն գրի-
գորի. որ և ընորին մշակու-
թն ելից զկարգն:

Որդ՝ մինչ 'ի խաղաղութեն էր խոս-
րով, այրմի բուրդար անուն 'ի Նշա-
նահոր ազգէն պարսից՝ ելեալ զկնի
անակայ եկն մինչև յարտաշատ. և
անտի ելեալ գնաց պանդխտել 'ի կող-
մանս գամրաց: Նա եկեալ 'ի կեսա-
րիա՛ առնու իւր կին 'ի հաւատացելոց
զքոյր ուրումն մեծատան եւթաղէ
անուն, և քեռն սոփի. և կեցեալ ամ
Դ. 'ի կեսարիա՝ առնու զկին իւր ըզ
սոփի և դառնայ անդրէն 'ի պարսկս.
Որոյ զհետ մտեալ եւթաղեայ՝ հա-
սանէ 'ի գաւառն այրարատեան. և գա-
գարել 'ի վաղարշապատ քաղաքի, մտա-
նէր սոփի ըստնտու մանկանն գրի-
գորի և համարձակ մուցանէր
զմեր լուսաւորիչն:

Որդ՝ իբրև եսպան անակ զխոսրով
և դեռ յոգւոջն էր թագաւորն, հրա-
ման տայր՝ զազգատոհմն անակայ 'ի
սուր սուսերի մաշել: Նա բուրդար
իբրև լուաւ զայս հրամանն 'ի թագա-
ւորէն՝ փութացեալ եմուտ առ ազո

հի կինն անակայ՝ եառ զգրիգոր՚ի գըր
կաց նորա , և ետ ցկինն իւր սոփի ։
Իսկ զՄիւս եղբայր նորա որ կոչիւր
սուրէն՝ մանկաբարձքն փախուցին՚ի
դուռն պարսից ․ և անդ մնաց առ հօ
րաքեռ իւրում ․ որ էր կին Թագաւո
րին Ջոյանշրի՝ եփթաղեայ ։ Եւ իբրև
զարգացաւ՝ գնաց յերկիրն Ճենաց
յետ մահուն խոսրովուհեայ ․ և կա
ցեալ՚ի նմա ամս տասն, թագաւորեաց
անդ ի վր̅ ազգին Ճենաց ամս ԺԹ ։
Իսկ ումանք համբաւեն թէ՝ զգօն ա
սեն եղբօրն գրիգորի , որէ յակոբ ․
բայց ոչ գիտեն զըստոյգն ։ Զի յա
կոբն այն՝ հօրաքեռ որդիէր սրբոյն
գրիգորի ․ և անուն մօր նորա խոսրո
վուհի ․ Սրոյ յորժամ մեռաւ մայրն՝
և բարձին զթագաւորութիւն՚ի հօրէն
նորա տիրանայ , զի եսպան զնա ար
քայն լփնայց ռէգէս ․ ապա յակոբ համ
դերձ քերբն իւրով ասկընդ էիճ մնաց
անդ ։ Եւ յետ ժամանակաց՝ քեռոր
դին նորա գնաց յաշխարհն զթայց և

խա Թա

թագաւորեաց անդ ։ զոր յետոյ ըմ
բռնեաց տրդատ՝ մինչ առ արքայն
յունաց էր ։ Զի սա էր որ եկն ՚ի պա
տերազմ խժերայ դիոկղետիանոսի ար
քային յունաց ։ Եթէ ստուգիւ կա
միս գիտել զայսոսիկ ով երանելիդ
բեկտոր , ընթերցիր զթագաւորու
թիւնն յեփթաղինեկայ՝ հելլենացի
գրով ․ և կամ զթագաւորութենէն
ճենաց ․ զոր գտանես յուռհա՛ քա
ղաքի՝ առ բարդա՛յ պատմագրի ։

✠

Տանիլն բուրդարայ զսբն գրիգոր ՚ի
կեսարիա և որ ինչ զկնի ։ 12

✠

Իսկ բուրդար առեալ զկինն իւր
և զմանուկն գրիգոր՝ գնաց ընդ
կնի աներոյն իւրոյ եւ թաղեայ յաշ
խարհն կապադովկացւոց ․ և տր
ճեալ զնա ՚ի դպրոց՝ ուսուցանէր նմա
ասորի և հելլենացի դպրութիւն և
լեզու ․ որև վարժեալ լինէր ամ պաշ

խբ    տու

տութբ ։ Եւ իբրեւ եղեւ Ժբ ամաց՝
այլ ոմն ածապաշտ դաւիթ անուն՝
ամուսնացոյց զնա ընդ դստերն իւ-
րում մարխամու ։ Եւ իբրեւ եղեն
նր երկու որդիք, անուն անդրանկին
վլթանէս, եւ կրտսերոյն ուստագէս,
մայրն եմուտ ՚ի վանս կանանց․ եւ կրտ-
սերն գնաց զհետ ճգնաւորի միոյ՝
որոյ անունն էր նիկիմաքոս․ իսկ անդ-
րանիկն մնաց առ դայեկացն, եւ յետոյ
ամուսնացաւ ։ Եւ հայրն անցեալ
գնաց առ տրդատ հատուցանել ըզ-
պարտս հօրն եւ մնաց առ նմա՝ մինչեւ
թագաւորեաց նա ՚ի տեղի հօրն իւրոյ։
Եւ վասն ոչ զոհելոյ կռոցն՝ ՚ի մեծամեծ
տանջանս մատնեաց զնա թագաւորն ։
Եւ իբրեւ լուաւ ի քեռոյ աներոյն
գրիգորի՝ թէ դա որդի է անակայ, որ-
եսպան զհայր քո զխոսրով, հարկ ըզ-
նա ՚ի վիրապն ներքին ամս հնգետա-
սան․ Եւ յետ հնգետասան ամացն՝
դիւահարեալ եղեւ ամ երկիրն հայոց․
եւ ինքն թագաւորն ի մէջ վարազէցն

երթեալ դադարէր։ Եւ ՚ի հրամանէն
տ̄ոյ՝ եկեալ նախարարքն հանին զնա ՚ի
վիրապէ անտի. և նորա ելեալ ժողո-
վեաց զնոսա առ ինքն. և Ե օր թողու
զնոսա անսուաղ առաջի իւր կալով
և լսելով զվարդապետութի̄ նորա ։
Այս՝ առաջին պահս եդաւ ՚ի սրբոյն
գրիգորէ. զորև սեղբեստրոս ՚ի հռոմ
հաւանեալ պահեաց ինքն և թագա-
ւորն կոստանդիանոս, և ամենայն քա-
ղաքն եգիպտոսի. զորև առաջաւոր
կոչեմք։ Եւ իբրև լցան աւուրք պա-
հոց, թափեցան մորթքն վայրենացել
խոզակերպին տրդատայ. և զօրացան
դիւաքանակ մարմինք նց̄, և ընկալան
զբժշկութիւն։ Ապա զձեռն ՚ի գործ
արկել ուսուցանէր նց̄ զճնել տունս
տէրունականս. և ասէ պարտէ քահա-
նայս օծանել. որք հովւեսցեն զձեզ։
Իսկ հրեշտակ տ̄ն՝ հաւանեցոյց զնս̄՝
զինքն լինել նոցա հովիւ։
Եւ իբրև յանձն էառ՝ ժողովէ թա-
գաւորն իշխանս և զօրս բազումս և

 տայ

տայ զգրիգորիոս 'ի ձեռս նորա և ա֊
ռաքէ յաշխարհն կապադովկացւոց
'ի քաղաքն կեսարիա ։ Եւ երթեալ
ձեռնադրի մեծաշուք պատուով 'ի մեծ
հայրապետէն ղեւոնդեայ ։ Որև առա
րեալ մեծարանս՝ տայ նմա զնշխարս
սրբոյ կարապետին յօհաննու , և
զաթանագինեայ վկային ։

Բայց թէ ով եբեր 'ի կեսարիա ըզ
նշխարս կարապետին ։ Յօհաննէս ա֊
ւետարանիչն մինչ էր 'ի պատմոս կղ
զին՝ եկն յեփեսոս ։ և անտի երթեալ
յերուսաղէմ, գտանէ զգերեզման նր
ըստ հրամանաց տեսչութեանն այ ։
Եւ առեալ 'ի գիշերի զմարմին կարա
պետին յօհաննու՝ եւ ցպօղիկարպոս
եպիսկոպոսն ։ որ էր աշակերտ իւր ։
և եւ տանիլ յեփեսոս յեկեղեցին զոր
ինքն շինեաց և կոչեաց զանուն նորա
սբ ծածկին ։ Եւ յետ փոխման աւե
տարանչին՝ մնաց յեփեսոս սբ նշխար
կարապետին մինչև 'ի ժամանակս դե
կոսի թագաւորին ։ Եւ 'ի նոյն ժամա

նակս Նստի յԵփեսոս՝ աշակերտ Ագ
դենոսի՝ Փարմելոս · և անտի հալա
ծեալ եկն 'ի Կեսարիա, ընդ իւր ու
նելով զբոլոր Նշխարս Սբ Կարապետին,
բաց 'ի գլխոյն · և եդ զնա 'ի Սբ սիրի
գոնն · ոչ 'ի ծածուկ, այլ յայտնի · և
այնպէս մնաց 'ի նոյն տեղւոջն մինչև
ցթագաւորութն Դիոկղետիանոսի ։
Իսկ 'ի գալ սրբոյն Գրիգորի առ Ղեւոն
դէս մեծ եպիսկոպոսն Կեսարիոյ 'ի
Ձեռնադրութիւն, բազում անգամ
խնդրեաց 'ի նմանէ զնշխարս սրբոյ
Կարապետին · այլ ոչ էառ յանձն · մինչև
հրամանն 'ի Տնէ առեալ՝ 'ի վերջնում
գիշերին՝ բաժանեալ տայ ցնա ըզ
կէսն ։ Իսկ 'ի վաղիւն բազում պատե
րազմ սկսաւ լինել · մինչև նախա
րարքն կռուեցին քաղաքապետին եր
կոտասան Ռ դահեկանս · և այնպէս
արարեալ՝ ելին բռնութբ 'ի քաղաքէն
մինչ զի՝ իշխանն անգեղտան խրհրդ
արարեալ հարկանել 'ի գիշերի զ քա
ղաքն ։ զոր իմացեալ հայրապետին՝

 հա

համոզեաց զնոսա 'ի խաղաղութիւն ։
Եւ փոխանակ երկոտասան ու դաշն-
կանին՝ ետ նոցա զնշխարս աթանա-
գինէի ։ և հազիւ կարաց արձակել
զնոսա սիրով և հաշտութբ̃ ։

Տայր սրբոյն գրիգորի և երկուս ա-
կունս լուսաճորս որք տրճեցելքէին
նմա 'ի հռոմայ հայրապետէն ։

Եւ ելեալ 'ի կեսարիոյ մնաց ժամա-
նակս ինչ 'ի սեբաստիա՝ համաքել
զդասս կրօնաւորաց ։ և կոչէր յաղէք
անդրիոյ զոմանս վարդապետս և պաշ-
տօնեայս ։ Որոց մինն գկլաւիոս ․ զոր
դընեայ գաշտին եպիսկոպոս ձեռնա-
դրեաց ։ Նոյնպէս և զայլս յասորւոց ։
Որ և զիս իսկ ոչ եթող դառնալ 'ի
Նիւստրա, հրաժարիլ յեղբօրէն իմմէ
եղիազարու ։ Եւ անտի ելեալ անցաք
'ի Թորթան ․ և անդ Թողաք զստուրտի-
նոս եպիսկոպոսն ա̃մ դաճառաց ։

Եւ մեք ելեալ անտի՝ կամեցաք անցա-
նել ընդ կարին և ընդ հարք ։

Իսկ ոմանք յիշխանացն զգացուցին

 սրբոյն

սրբոյն գրիգորի թէ՛ 'ի գաւառն տարօ
նոյ էն Ը թագինք մնացեալք որ դեռ
ձօնեն դիւաց: Այլ նորա դէմ եդեալ
գայր 'ի խորտակել զնոսա. և եկեալ
յերկիրն պաղունեաց յաճանն մեծ գի
սանէ 'ի քաղաքագեօղն կոճաաս. և
ոմանք 'ի քրմացն անդ հանդիպեալ
տեղեկացան յիշխանէն հաշտենից է
թէ 'ի վաղիւն խորտակելոց են զմեծ
չաստուածն գիսանեայ եդեմեորեայ:
և գիշերագնաց եղեալ 'ի տեղի չաստ
ուածոցն, լցին զգանձն 'ի տունս գետ
նափորս. և ինքեանք ազդ արարեալ
յաշտիշատ քուրմն՝ թէ ժողովեսցէք
զռ̃մ արս պատերազմօղս. և փութա
պէս 'ի վաղիւն հասէք առ մեզ. զի
մեծն գիսանէս 'ի պատերազմ եկանե
լոցէ ընդ ուրացեալ իշխանացն:
Այնպէս և զզօրսն կոճաուաց սրե
ցին դարանս գործել 'ի ցանկս այ
գեացն. և զոմանս անտառուին՝ դար
ձուցին: Այլ գլխաւոր քուրմներ
անուն արձան. և որդւոյ նք դեմետր:

և առնել զօրս որ՚ի կոճառատաննէին, արս իբրև չորս հարիւր. և ելեալ՚ի լերինն որ հանդէպ կոճառայցնէր. և մնացին մինչև այլ զօրք ուստեք եկես ցեն յօգնականութի նց: Ապա՚ի վաղիճն ելեալ անցանէին ընդ ստորոտ լերինն. զօրօրինակ սովորէին ասպատակել: Իսկ սբն գրիգորի առեալ զիշխանն արծրունի և զիշխանն անձևացեաց և զիշխանն անգեղտան. և սակաւ ինչ զօրօք իբրև երեք հարիւր արամբք ելեալ յերրորդ ժամուն ընդ բլուրն ուր արձաննէր թաքուցել. և գնացին անհոգս եղեալ բնաւ չունելով կաս կածս: Ապա իբրև մերձ եղեն ընդ ել դառխվյր, յառաջ մատուցեալ ար ձանն և գեմետր, հնչեցուցին զփողն պատերազմի՝ և յանդգնաբար յարձա կեցան ի վերայ. զոր լուեալ իշխանացն ընդոստեան յոյժ: զի յորժամ լուան երիվարքն զձայնն՝ վրընջել և պատե րազմիլ յուզեին: Իսկ իշխանն ան գեղտան ձայն տուեալ ասէր, սկսնեաց

իշխան յառաջ մատեր և տես, գուցէ
զօրք Հիւսիսոյ իշխանին իցեն. և նո
երթեալ ոչ կարաց գիտել թէ ոյք են։
Դարձաւ և ասէ, դարձի զԳրիգորդ
յանհոգ տեղիս. զի մի ըմբռնիցի 'ի
թշնամեաց, և մեք ամաչիցեմք 'ի թա
գաւորէն։ և դու առաքեա զոք զկնի
զօրացն մերոց, զի դարձցին յետս.
զի ուժգին է բազում զօրաց. և բա
զում դրօշք երևին փողփողեալք։
Իսկ իշխանն անգեղտան՝ տայ զսրբն
Գրիգոր 'ի ձեռն մոկաց իշխանին և
ասէ, փութացի զդա յամուրն ուղ
կան. մինչև տեսցուք թէ զինչ լինի
ցի. և ինքն առաքեաց զկնի զօրացն
ազդ առնել։ Իսկ իշխանն մոկաց առ
նու զԳրիգորիոս և դառնայ զառիվայր
լերինն. կամելով իջանել 'ի կոճառս։
Իսկ արք տեղւոյն սկսան զանցս ճա
նապարհին պահել՝ և տեսեալ սրբոյն
Գրիգորի թէ մեծ վտանգէ 'ի տեղւոյն,
իջուցեալ զնշխարսն մերձ առ իւր
յայնկոյս ձորոյն՝ հանդէպ գեղջն

ցնէր և նշանագրէր. և ծածկեաց տ̃ր
զտեղին և ոչ ոք կարաց տեսանել զ̃նա,
մինչև տ̃ն գրիգոր դարձաւ անդրէն
'ի տեղին ։ * Իսկ արք գեղջն հետա
մուտ եղեն մեզ. և մեր հեծեալ իւ
րաքանչիւր յերիվարս մեր՝ գնացաք
փախըստական յամուրն ուղկան. և
յառաջեալ քան զնո՝ մտաք'ի ներքս.
քանզի ընդդէմ եկին արք տեղւոյն
և մուծին զմեզ ներքս ։ Իսկ արք
գեղջն ակեալ անցին յայնկոյս և զամ
րոցն պաշարեցին ։ Եւ մեր 'ի վարանս
մտեալ՝ յղեցաք զոմն գիշերագնաց
առ իշխանն անգեղոան և թղթով ծա
նուցաք նմա զիրսն ։ Եւ նորա առա
քեալ չորս հարիւր արս ընտիրս և
սուսերաւորս ։ որք եկեալ 'ի վաղիւն
անցին յայնկոյս գետոյն ։ և յետ երից
աւուրց առին զքաղաքն և զամենայն
շինուածսն կործանեցին. և զմարդիկն
բերեալ 'ի տեղի անցուցին ։ Իսկ իշ
խանքն ելին իւրեայ բլրին և տեսին
զարձանն, զի արս Դ հարիւրս լուկ

թէ ունէր. և վաղվաղակի յարձակեալ
իվերայ իշխանացն՝ ’ի փախուստ դար-
ձուցին զզօրսն։ Իսկ այլ զօրքն Հայոց
իբրև լուան զձայն գուժին՝ ամենե-
քեան անդ ’ի քլուրն հասանէին։
Իսկ արձանն յառաջ մատուցեալ
սկսաւ թշնամանել զիշխանսն Հայոց.
և ասէ, յառաջ մատիք ով դենակո-
րոյք և ուրացողք զհայրենի աստ-
ուածսն. թշնամիք բարեփառին գիսա-
նեայ և ուրացողք զնա։ ոչ գիտէք,
զի մեծն գիսանէ ի պատերազմ ելեալ է
վասն ձեր. և մատնելոց է զձեզ ’ի
ձեռս մեր. և հարկանելոց է զձեզ
կուրութեամբ և մահուամբ. Իսկ իշխանն
արծրունեաց ’ի մէջ անցեալ ասէ, ով
որ խրոխտասդ իվերայ մեր, թէ վս
չաստուածն մարտնչիս՝ սուտ ես. և թէ
վասն երկրիդ՝ բնաւ իսկ անմիտ էք.
զի են աստ իշխանքն անգեղտան եւ
սիւնեաց տանն, և այլք ’ի պատուականոր-
արանցն զորս ճանաչէք իսկ. Իսկ դե-
մետր որդին արձանայ ասէ, լուարուք

 մեզ

մեզ իշխանք Հայոց, զի այս քառասուն
ամ է որ ծառայեմք մեծի աստուա
ծոյն. և գիտեմք զզօրութիւն նոյա
ընդդէմ թշնամեացն. զի ընդ թշնա
միս պաշտօնէից իւրեանց՝ ինքեանք
մարտնչին: Արդ՝ մեք պատերազմաւ
ընդդիմանալ ձեզ ոչ կարեմք. զի այս
տուն թագաւորին Հայոց է. բայց այս
ձեզ յայտնի լիցի, զի թէպէտ յաղ
թել ոչ կարեմք, սակայն լաւ է մեզ մե
ռանիլ ի վերայ աստուածոցն մերոց,
քան զնոսա 'ի ձեռն ապականեալ տե
սանել. որով զկեանս ատեցի և զմահ
սիրեցի. Բայց որ իշխանդ ես անգեղ
տան՝ յառաջ մատիր զի մենամարտի
ցուք ես և դու: Յայնժամ 'ի մէջ
անցեալ արձանն և անգեղտան իշ
խանն սկսան անցանել զմիմեամբք.
և աճապարեալ արձանն էհար տիգաւ
ի վերայ բարձից նր և մերձ տարաւ
ընկենուլ զնա. յայնժամ իշխանն ի մր
դարձաւ և ասէ, գիտեա՛ արձան, զի
արձանանալ պիտի քեզ այսօր 'ի տե
ղւոջս յայսմիկ. և 'ի վեր ամբարձեալ

զՆեռն իւր՝ իջուցանէր զսուրն իւր̅
թիկանցն և իբրև հանէր զգլուխ նր̅·
և նա անկեալ յերկիր թաւալէր ։ և
կուտեցին արձան իվերայ նորա · և
կայ 'ի Թաղման 'ի նոյն տեղւոջն · որև
դեռ արձան կոչեն լերինն այնմիկ
մինչև ցայսօր ։

Եւ մինչ այս այսպէս գործեցաւ ,
փութանակի եկին հասին զօրք քըր-
մացն 'ի վիշապ քաղաքէ , արք պարխոյ
և արք մեղտոյ · և ամենեքեան առ հա
սարակ անդր հասանէին ։ և այլք յաշ
տենից եկեալ ընդ նոսա · ընդ ամե
նեսեան *(ոպ̃ յետոյ ինքեանք ասէին)
է̅ հազար և չորս հարիւր այր ։

Եւ իբրև հասին 'ի գլուխ լերինն՝
գուժեաց ձայն յերկոսին գունդսն ·
և միաբանեալ դասք քրմացն ընդ մի
մեանս՝ յարձակեցան իվերայ զօրացն
հայոց · և փախստական արարեալ ըզ
նոսա՝ իջուցին զառիվայր լերինն ընդ
գեղջն կողմն ։ Իսկ արք գեղջն քան
զի գարանամուտք էին ը̃դէմ եկեալ
մերոց զօրացն՝ 'ի մէջ առեալ յեր

կուց կողմանց զզօրսն Հայոց՝ սկսան
կոտորել զնոսա ։ Իսկ իշխանն ան
գեղտան հերձեալ զքրմաց կողմն
անցանէր յետուստ կողմանէ և ուշ
բլրին առնէր ։ զի անդ արք հետևակք
որք զառխվայր կողմնէնէին՝ բզ̃ւմ
վնասս արարին երիվարացն վիմօք ։
Իսկ դեմետր իբրև ետես թէ անգեղ
տան իշխանն 'ի բլուրն էր՝ թողեալ
զայլ զօրսն և ուշ նմա արարեալ · նոյն
պէս և այլ զօրքն՝ սկսան ձիախաղաց
անդ ժողովիլ · և իբրև ելին ի վր̃ բլրին՝
սկսան ճակատիլ դարձեալ ընդ մի
մեանս ։ Իսկ կացին մնացին մեր իշ
խանքն զօրուն իւրեանց · զի չէին ժո
ղովեալ ամենեքեան · զի չորս հազար'ի
մեղտի զգերիսն ունէին · և երեք հա
զար ընդ բասէն և ընդ հարք անցին ·
իսկ այլքն դեռ 'ի դաշտին սփռեցե̃լ
ասպատակէին ։ Իսկ իբրև ճակատե
ցան՝ և կամէին խառնիլ ը̃ միմեանս՝
էհաս նոցա երեկոյ · և'ի նոյն վայրի
իջե̃լ բանակեցան մինչև ցառաւօտն


Իսկ

Եւ իբրև առաւօտ եղև՝ եկեալ հա-
սին մնացեալ զօրքն հայոց և այլք ո-
մանք 'ի տիրակատարն քաղաքէ իբրև
հինգ հարիւր օգնել քրմացն : և իբրև
եկին՝ հարստացան երկոքին կողմքն :
Էին քրմացն արք , վեց հազար ինն հա-
րիւր քառասուն և ղ • իսկ իշխանացն
հայոց՝ հինգ հազար ութսուն :

Յայնժամ հնչեցին զփողս պատե-
րազմին և դիմեցին առ հասարակ իմ̃
միմեանց • և յառաջնումն յաղթեցին
զօրքն հայոց քրմացն • իսկ իշխանն
հաշտենից որ էր ընդ իշխանսն հայոց՝
կոտրեալ զկողմն հայոց Է հարիւր ա-
րամբք 'ի քրմաց կողմն եղանէր • և
սկսաւ կռուիլ ընդ իշխանսն հայոց •
զոր տեսեալ իշխանացն հայոց՝ լքեալ
կործանեցան • զի այնպիսի էր այրն այն
յաղթօղ և կորովի , և 'ի գործ պատե-
րազմի առաջադէմ , մինչ զի ամենայն
իշխանքն գողային 'ի նմանէ • որ և սկ-
սաւ իսկ արեան ճապաղիս հանել ան-
խնայապէս • յայնժամ աղաղակ բար

 ձին

ձին զօրքն առաջի սուննեաց իշխանին:
Իբր նա ձայն տըւեալ ասէ, ո՛վ գայլա-
կորիւն, յիշեցէ՛ր զբարս քո և՛ինոյն
շաղղակերութի՛ դարձար : Իսկ նա
ձայն տըւեալ ասէր, ո՛վ արծըւոյ ձագ,
Թևօքդ ես հպարտացեալ. բայց եթէ
՚ի շարակնատացս անկանիցիս՝ ես ցու-
ցանեմ քեզ զզօրութիւն քո :
Իբր չհանդուրժել իշխանն հայոց ը̄
Թշնամանսն՝ յարձակեալ իմերայ նր̄
էհար միանգամն ՚ի վերայ սաղաւարտին
և կտրեաց զնա ՚ի զօրացն և փախըս-
տական արար ՚ի վերայ լերինն ընդ ա̄-
րևելս կոյս : Իբր հասեալ նմա հան-
դէպ իննակնեան վանացն՝ մղեալ ըն-
կէց յերիվարէն. և իջեալ կտրեաց ըզ
գլուխ նորա. և զմարմինն գահավէժ
արարեալ ասէ, տեսցեն զքեզ ան-
գեղք և գիտասցեն թէ արծըւոյ հա-
րեալէ զնապաստակդ : և ինքն դար-
ձաւ. և մինչև ցայսօր արծըւիք ասեն
տեղւոյն: Իսկ իշխանն արծրունեաց
՚ի մէջ անցեալ կտրեաց զկողմն քըր

ծէ մոց

մաց. և իբրև եհաս նմա՝ ընդ դէմ դարձաւ նմա մէտակէօն և ընկէց զբարձս նորա: Եւ նա ջեռեալ արիւն անձին իւրոյ, աճապարեալ կտրեաց զգլուխ նորա, և պարանոցաւն ՚ի վայր ընկէց և զգլի նորա դարահօս արար. որև մէտսակօղի կոչէին զտեղւոյն անուն: Իսկ իշխանն արջայ՝ փախեալ թագեաւ ՚ի նոյն վայրս. զոր տեսեալ արծրունեաց իշխանին՝ որպէս ընդ չտեսանաւ արար. և գնացեալ յանկարծակի յարձակեցաւ ի վր̄ նորա. և նորա փախուցեալ ընդ անտառն՝ եանց կտրան փայտի ընդ սիրտն և մեռաւ անդէն: Եւ նորա առեալ զերկոսին երիվարսն դարձաւ. և անուանեցաւ տեղւոյն արջոյ ձոր: Եւ իբրև դարձաւ անտի՝ նկէնլ հանդիպեցաւ, զի դեմետր և անգեղտան իշխանքն մարտնչէին ընդ միմեանս. և նորա ՚ի վերայ հասեալ՝ կտրեաց զաջոյ ուս նորա և ՚ի վայր ընկէց. և կտրեաց զգլուխն և եդ ՚ի մախաղ իւր:

 Եւ

Եւ դարձան 'ի վերայ զօրացն կոտո-
րել զնոսա անխնայ. եւ սպանին իբրեւ
արս հազար եւ երեսուն. եւ զայլսն մեր-
կացուցին: Եւ 'ի նոյն պատերազմին
եսպան դեմետր զորդի մոկաց իշխա-
նին. որ եւ մեծ սուգ եհաս իշխանացն:
Յորդ՝ իբրեւ մեռաւ դեմետր 'ի նոյն
պատերազմին՝ հնչեցոյց իշխանն սիւ-
նեաց զփողս պատերազմին 'ի խաղա-
ղութի. զի զմեռեալս իւրեանց թա-
ղեսցեն. եւ թոյլ ետուն երկոցունց
կողմանցն ժողովել զմեռեալս իւրեանց.
եւ գերեզմանս հատեալ՝ լցին զնոսա
'ի ներքս. եւ կանգնեցին արձանս 'ի վր
նոցա: Եւ գրեցին թէ՝ այս առաջին
պատերազմ՝ եղեւ յոյժ պատերազմ.
եւ արձան քրմապետն կայ աստ 'ի թաղ-
ման. եւ ընդ նմա արք ռ̄ ղ եւ ը̄. եւ զայս
պատերազմ արարուք վասն գիտնեայ
կուոցն եւ վասն Քի. եւ զայս գրեցին ա-
սորի եւ հելլենացի գրով. եւ յոյն եւ իս-
մայելացի նշանով: Եւ իջին ինքեանք
երեկօթս առնել յիննակնեան տե-

ղուոյն. և փութապէս կոչնականս ա-
րարին սրբոյն գրիգորի. և ինքեանք
մնացին անդէն. ոմանք 'ի դիտանոցին
մնացին. և այլ զօրքն 'ի մարգաձախին
առ աղբերն անտառին ։ Իսկ մեք ե-
լեալ յանտառէն եկաք առ նոյն ճա-
նապարհ ընդոր փախստական գնա-
ցաք, և իբրև եկաք 'ի վայրս գեղջն՝
մոլորեցաք 'ի ճանապարհէն.

զի գլուխ էր ։

Այց մինչ դեռ գոյաք առ ափամբ
այգեստանեայցն, յանկարծակի ծա-
գեաց լոյս սաստիկ առաւել քան ըզ-
ճառագայթս արեգական 'ի նշխարացն
զոր պահեալէր սրբոյն գրիգորի. և
այնչափ սաստիկ եղև ծագեցեալ,
մինչ ամ բնակիչք գեղջն 'ի դուրս ըն-
թացեալ արք և կանայք՝ ծերք և տը-
ղայք՝ 'ի տեսանել փութային. և հիա-
ցեալ ընդ տեսիլն սկսան զըղջանալ ։
Իսկ բարձեալ նոյնժամայն զնշխարսն
իջաք ի գեօղն. և պաշտօն ցնծութեն
կատարեցաք մինչև ցառաւօտն ։

Եւ 'ի խաղին բարձել եկաք յարձանն
և ընթերցաք զգիրն․ և բազում ժամս
սրտասնեաց ընդ գրիգոր մեր իզուր
կոտորածին։ Եւ ապա առեալ զաջ
թեւն սրբոյ մկրտչին՝ ընտրեաց ըղ-
գաճառն ասելով, եղիցի աջ սա 'ի վր
գաճառիս այսորիկ պահել 'ի թշնա-
մեաց։ և թէ մի մեղաց իւրեանց տան
ջեցան 'ի սմնէ, սակայն թշնամիք մի
յերկարեցին այլ չարեօք իւրեանց
սատակեցին․ և մի հերձուածողք
բնակեսցին յայսմ աշխարհի․ մինչ սըր-
բոյ կարապետին եղիցի պահապան։
և միանգամայն եղիցի տուն այս շին-
ուած յաճխտենական յազգաց յազգս։
և ասացեալ զամենն, ձայն դղրդի է-
հաս յականջս մեր։ Եւ իբրև եկեալ
հասաք յԱննականեան տեղին, ընդ ա-
ռաջ եղեն մեզ իշխանքն հայոց, աճե-
տիս տալով թէ դեմետր կործանե-
ցաւ։ և իբրև եկաք 'ի տեղին՝ տեսաք
զտեղի կռոցն քանդեալ․ և բագինն
որ էր հնգետասան կանգուն՝ ընդ գ

բաժանեալ. և քրմացն աղաղակ բար-
ձեալ չարաչար: Այլև դևքն ևս 'ի
լսելիս մարդկան կոծեին ասելով,
վայ մեզ զի ոսկերք մարդկան մեռե-
լոց հալածեն զմեզ յերկրէ. և մարդ-
կորէն տեսլեամբ որպէս զթևաւոր
ելեալ գնացին յաշտիշատի կուռսն:
Իսկ այլք 'ի դիւացն ոպ պլծակս ան-
հուն բազմութբ' և որպէս թանձրա-
մած տարափս' յարձակեալ 'ի վերայ
բազմութենցն զքուրմսն առ հասա-
րակ լլկեալ թողին իբրև զմեռեալս:
Իսկ մատուցեալ սբն Գրիգոր բժշ-
կեաց զնոսա. և հրամայեաց կործա-
նել զկուռսն փայտեայ. զի պղնձիներ.
որոց երկայնութիւներ երկոտասան
կանգուն: Իսկ իբրև մերձեցան կոր-
ծանիչքն' տեսեալ պաշտօնէիցն' բա-
զում ողբովք 'ի վերայ յարձակեալ
ասէին, մեռցուք նախ մեք, և ապա մեհ-
եանդ մեր: Իսկ զօրացն 'ի մէջ առեալ
սպանին արս վեց. և ապա կարացին
կործանել զդուրս մահուն:

Իսկ դևքն ձայն բարձեալ ասէին ,
Թէպէտ հալածէք դուք զմեզ աստի,
բայց որ կամիս աստ բնակել՝ և նա
մի գտցէ հանգիստ ։ բայց ոչ է հաւա
տալի․ Զոր օրինակ՝ 'ի գուբս քաղա
քի բազում զօրք մտանեն , այսպէս
և այս տեղի՝ դիւաց գունդք․ և այն
չափ բազում են 'ի տեղիս դևքն դի
մանեալ՝ որչափ 'ի սանդարամետս ան
դնդոց ։ Այլ երբեմն կործանեցին
վէմքն զկուսան՝ սկսան նքն գրիգոր
եկեղեցիս հիմնարկել․ և զի ոչ գոյր
նոցա նիւթ պատրաստեալ՝ առեալ
քարինս անկազմս և անտաշս , և դր
տեալ կէր 'ի բնակութիւնս կուոցն՝
սկիզբն արարին եկեղեցւոյ 'ի տեղւոջն
ուր բագինն դևմետրեայ էր լեալ․ և
արար անդ աճուրս երկոտասան ։
Այլ զնշխարս Տե կարապետին զա
մենն աստ կամէր դնել․ բայց ոչ եառ
հրաման 'ի Տնէ․ այլ զհասարակն ա
ռեալ դնէր 'ի տապան բրտեայ․ զի հո
ղեղէն է և ոչ ոսկեղէն ․ վասն այնորիկ



ոչ է

ոչէ պարտ ոսկեով ծեփել զմեռեալ մարմին մարդոյն ։ Իսկ ևս զնոյն տապանն ի նոյն պղնձի տապանն . և եդ անդ զմի ակն լուսոյ զոր եբեր ի կեսարիոյ անունն . լիդրոն ։ Իսկ ոչ եթէ յայտնապէս ումեք գնէր զիրսն , այլ ի ծածուկ . առեալ ի գիշերի բրինչ ։ ես ևսողբիանոս եպիսկոպոսն բերեցաք երկու առնաչափ . և արկեալ ի ներքս խիճս քարանց , եդաք անդ զնշխարս սրբոյ կարապետին ։ Իսկ այսոքիկ էին զորս եդաք . թիկնամէջն արմկոյն . և ձախ թևն թիկամբն . և ի բարձիցն աջակողմեան բարձն . և այլ մանր ոսկերք ի մարմնոյն ։ Իսկ և սրբոյն աթանագինէի զգլուխն և զաջ թևն մինչև ցգօտին հատեալ եդաք . և է նորոյն ի կաճէ տապան ։ Իսկ եթէ կամիք ճշտոյգն իմանալ՝ զպիսիդոն ասորի թարգմանիչն հարցէք , և նա ասէ ձեզ ։ քանզի կարապետին սրբոյ՝ էառ անկեան դրանն արշակունի . թզաճմի հեռի գտանես զքևեռ նշանացն . կէս

Պ . կէ թզաճ

Թղաւ բարձր'ի գետնոյն․ և յոյժմէ է
կեղեցւոյն ։ Իսկ գրեաց սուրբն գրի
գոր'ի պղնձի տախտակս և եդ'ի բեմ
անդ, եթէ կեն ոք մի իշխեսցէ մոռա
նել 'ի դուռն եկեղեցւոյս․ զի մի կո
խելով զպատուական նշխարսն՝ ան
հաշտ խառնութի լիցի ընդ նմա․ որք
մոռանեն և անկնարկեն 'ի նա ։ զոր և
պխոխգոն իսկ ընթերցեալ է ըղ ո խ
ոակն ։ Իսկ աթանագինէս կայ հուպ
առ սեամն ընդ ձախակողմեանն․ և
այսպէս անյայտ կան 'ի պահեստի ։ զի
մէ և գտանել ոք կամի՝ ոչ կարէ․ զի
պատճառ իրացն այս եղև ։ Իսկ իբրև
եդաք 'ի տեղւոջ իւրում և ծածկե
ցաք, երիցս անգամ ծունր կրկնեալ
սրբոյն գրիգորի մեօք հանդերձ, և
յարուցեալ տարածեաց զձեռս
իւր ընդ արեւելս և ասէ ։
Աստուծոյ և տէր տէրանց,
որ կատարես զկամս երկիւղածաց
քոյ, և ոչ անտես առնես զաղաչան․
այնոցիկ՝ որք խնդրեն'ի քէն․ դու տր

պահեցեր զաւ և ածեր մինչև 'ի տե
ղիս այս: Հզգեա՛ զաջ քո 'ի վերայ տա
պանաց սոցա. և կնքեա՛ անվթար զօ
րութ̃բ քով զոսկերս սոցա. զի մի
ոք կարասցէ հանել աստի մինչև յօր
կատարածի աշխարհի, և նորոգման
սոցա և ամենայն սրբոց: Թէև 'ի սր
բոց ոք ջանայցէ աղօթիւք, մի յայտ
ներ. այլ որ յուսով հաւանեալ և հա
ւատով գան 'ի բժշկութիւն 'ի դուռն
եկեղեցւոյս, խնդրուածովք կարապե
տիս այսորիկ՝ բժշկեա՛ զնոսա: բայց
թէ կամք իցէ քո թողուլ զնոսա 'ի
ցաւս իւրեանց, զի տանջեալ մարմ
նով՝ ապրեսցին հոգւով 'ի հանդեր
ձեալն: և ասացեալ զամէնն:

Եւ եղև ձայն յերկնից որ ասէր, է
ղիցի քեզ որպէս և կամիս. և մի ոք
գիտասցէ զնոսա ըստ հանելոյ կող
մանց: և որ ոք ծառայեսցէ ինձ սբ̃
և անկեղծաւոր վարուք 'ի դոյն տե
ղւոջս՝ մասնակից լիցի ն̃ց բարեացն:
Եւ շարժեալ տեղին ծածկեցաւ:

Եւ իբրեւ լցաւ նոցա անդ Ծ օր, երթեալ իշխանն՝ սիւնեաց յաւանն կուառայ՝ հաւանեցոյց զզօրս գեղջն գալ 'ի մկրտութիւն · եւ առեալ սրբոյն գրիգորի իջոյց զնոսա 'ի ձորն այծսանայ եւ մկրտեաց զնոսա · եւ որք մկրտեցանն՝ էին արք հինգ հազար ։

Եւ առեալ էած զնոսա 'ի տէրունական տաճարն եւ տօն սրբոյ կարապետին տայր կատարել · որ օր մէր 'ի նաւասարդի · եւ տըւեալ զնոսա 'ի ձեռս քահանայիցն ետ տանել 'ի գեօղն ։

Եւ հրամայեաց քահանայիցն խաչ կանգնել 'ի տեղւոջն, ուր զնշխարսն եդին · եւ ետ մկրտել անդ զկանայսն ։

Իբրեւ այս ամենայն եղեւ՝ ժողովեալ սուրբն գրիգոր զմանկունսն քրմացն եւ զպաշտօնեայս կռոցն՝ աղաչէր զնոսա դառնալ 'ի տէր ած · իսկ նոքա ոչ առնուին յանձն՝ այլ ասէին ցիշխանսն զայս 'ի մի ո առէք · որ թէ ապրիմք՝ փոխարէնս առնեմք ձեզ · եւ թէ մե

ռանիմք՝ ցծքն հատուցանեն զվրէժս
մեր։ ✻ Եւ լուեալ զայս իշխանն ան
գեղտան՝ եւ տանել զնոսա 'ի փայտա
կարան քաղաք արս չորս հարիւր ե
րեսուն եւ ութ, գերծեալ զգէսս նց։
Եղև յոյժ զարմանալի նկէր տեսիլ
նոցա. զի սեաւքէին եւ գիսաւորք, եւ
զազրատեսիլք. զի ցեղով 'ի հընդ
կացէին. քանզի կուոցն որք յայսմ
տեղւոջէին՝ պատճառն այսէ։
Յետոյ եգիպտանէ իշխանքէին հընդ
կաց եւեղբարք ցեղով եւ փախուցեալք
'ի թագաւորէն հընդկաց՝ հալածե
ցան եւ եկին մինչեւ յաշխարհս հայոց.
Եւ իբրև եկին առ թգ̃որ հայոց
վաղարշակ՝ եւ նա զերկիրն տարօնոյ
ընդ իշխանութբ̃ նոցա. յորում շի
նեցին քաղաք եւ կոչեցին վիշապ. որք
եկեալ յատիշատէ՝ կանգնեցին ըզ
կուռսն զայնոսիկ զոր 'ի հնդիկս պաշ
տէին։ Եւ յետ հընգետասան ամի
եսպան թագաւորն զերկոսեանն, եւ
զտեղին իշխանութեն՝ ետ որդւոց
 նո

նց կուառայ և մեղտեսայ և Հոռեայ։
Սա՛ շինեաց կուառ իւր աւան, և կո
չեաց յանուն իւր կուառս • և մեղ
տես շինեաց աւան 'ի գաւառին, և կո
չեաց մեղտիս։ Իսկ կրտսերն անցեալ
'ի գաւառն պալունեաց՝ շինեաց անդ
աւանս և կոչեաց Հոռանս։ Սա՛ յետ
ժամանակաց խորհուրդ առեալ կո
ւառս և մեղտես և Հոռեան՝ ելին 'ի
լեառն քարքէ • և տեսեալ զայն տե
ղի զի ընդ արձակութիւնէր որսոյ,
և Հովաբեր խոտոյ, և փայտի առա
տաձեռն, շինեցին զնա դաստակերտ •
և կանգնեցին 'ի նմա երկուս կուռս •
զմինն յանուն գիսանեայ՝ և զմիւսն
յանուն դեմետրեայ • և ետուն 'ի ըս
պասաւորութ͞ն նց͞ զազգն իւրեանց։
Սա՛ գիսանէ, զի գիսաւորէր • վասն
այնորիկ և պաշտօնեայք նորա գէսս
ունէին • զի յորժամ 'ի ք͞ս դարձան՝
չէին կատարեալ 'ի Հաւատս • և ըզ
Հայրենի օրէնսն չիշխէին յայտնի ու
նել • ապա խաբէութ͞ե զայս հնարս

կթ խմ

իմացան • ծամ թողին 'ի գլուխս ման
կանցն • զի զայն տեսեալ՝ յիշեսցեն
զառաջին պղծութիւնն իւրեանց:
Արդ ես աղաչեմ, զգոյշ կացէք • զի

մի այս և 'ի ձերում եր
կիրդ սերմանիցի:

Արդ՝ մեք դարձցուք. յառաջին կարգն:
* Հիմնարկեաց զեկեղեցին և եդ
անդ զնշխարսն, և կանգնեաց զնշան
տրունական խաչին 'ի դուռն եկեղե
ցւոյն 'ի տեղի կռոյն գխանեայ:
Եւ եթող անդ պաշտօնեայս եկեղե
ցւոյն՝ զանտոն և զկրօնիդէս • և զե
պիփան Հայր Հաստատեաց վանացն
ընդ ձեռամբ իւրով: և եթող 'ի տե
ղւոջն արս կրօնաւորս քառասուն և
երեք • և ետ նոցա երկոտասան դա
սակերտս, զի ծառայեսցեն տեղեայն:
Որոց մինն կոճառս և մեղտի և բըր
բեխ և մուշ և խոյնի և կեղջ և բու
զուչքանցի աճանք են սոքա բազում
և մեծամեծք • որպ և կայ իսկ 'ի գիրս
իշխանացն մամլունէից • Բանզի կո

Հ Ճառս

Հառս ունի երգահամարս ճ̅ծ̅ժբ. և
հեծեալս ռ և չ ։ և տումբ ծուխս
թ̅ճ̅։ և հետևակս բ̅ռ̅. և երկերիւր։
Մուշ և մեղտի ունի ծուխս բ̅ռ̅,էճ։
և հեծեալս ը̅ճ̅։ և հետևակս ռ̅չ.
Խորնի ունի ծուխս ռ̅ջզ. և հեծեալս
էճ. և հետևակս ռ̅էճ։ Խնկ՝ բրեխ
ունի ծուխ ռ̅ճճ։ և հեծեալս ութ,ճ̅։
և հետևակս չ̅ հարիւր։ Նաք բու
զու ունի ծուխս հինգհարիւր։ և
հեծեալս բ̅ռ̅ և քառասուն։ և հետև
ակս աղեղնաւորս է հարիւր քառա
սուն։ և տիգաւորս չ̅ճճ։ և պարսա
ւորս բ̅ճ̅ ութսուն։ Որդ՝ այսոքիկ
անհնազեօղք տրհեալքէին 'ի բնէ 'ի
ծառայութի կւոցն. զորև իշխանքն
հաստատեցին դարձեալ 'ի վերայ եկե
ղեցւոյն սմա և բ̅ թըռով.

Զայս այսպէս պահեալ է սրբոյն գրի

գորի.

Որդ՝ յետ երկոտասան ամօւր՝ եր
թեալ իջանէաք 'ի քղքագեօղն մեղտի
ևանդ երեկօթս արարաք։ Նաք'իմէջ
հա                    գի

գիշերի հէն սրբմի և պատմեաց Թէ , որք Հիւսիսոյ գան 'ի վերայ մեր․ և մեր դէմ եդեալ կամէաք անցանել յայն-կոյս գետոյն յամբոցմի կոչեցեալ Թարէնկ․ ևիշխանքն անցեալ գնացին մինչ 'ի դուռն մուշ քաղաքին․ և տեղեկացան զի ո՛չինչ էր․ ևապա դարձեալ եկին ընդառաջ մեր եդարձուցին զմեզ յերեսաց արածանու ։ Ոմանք յին-քեանց յառաջ գնացեալ մտին 'ի քաղաքն․ և ոմանք ընդ մեզ երԹային․ Իբր և հասացաք 'ի գետոյն իբր ձիոյ արշաւանօք երկու կամ երեք , և մերձեցաք 'ի փոքր ձորակն , և կամեցաք անցանել և գնալ 'ի տեղի մեհենիցն , քանզի անդ իսկ էր խորհեալ գնել զմնացեալ նշխարսն․ Ջորիք կառացն ոչ կարացին անցանել ընդ ձորակն ։ Յայնժամ հրեշտակ տ͞ն արգել ըզ-տ͞րն գրիգոր ասելով՝ հաճեցաւ տ͞ր բնակիլ սրբոցդ 'ի տեղւոջդ յայդմիկ․ և վասն ցուցանելոյ 'ի հեռագոյն տեղւոյ անտի զօրու Թ͞ն ա͞յ կենդանւոյ



սքան

պանչելեացն՝ անդէն զձեռն ՚ի գործ
արկեալ շինածոյ եկեղեցւոյ։
Եւ նոյն օրինակաւ կազմեցաք ՚ի գե
տերի զտեղի նշխարացն. և եդաք ըզ
նոսա ՚ի քարեայ տապանի իբրև առ
նաչափ. և զերկուց վկայիցն մերձ
առ դուռն՝ յաջ կողմն եկեղեցւոյն. և
զմիւս ակն լուսոյ՝ դնէր ՚ի տապանին,
յաղագս միշտ լուսոյն զոր ունիր։
Եւ զորս եդաքն՝ այս են. զաթանա
գինէին զհասարակն. և զկարապետին
սրբոյ զերկուս բարձն ձախակող
մեան. և զերկուս սրունսն. և մասն
ինչ յոսկերաց ոտինն։ Իսկ զայլսն ՚ի
կեսարիա առին իւրեանց մասն. զեր
կուս ոտսն և զահեակ բազուկն և
զաջ ձեռն մինչև ցարմուկն։
Արդ՝ իբրև եդաք ՚ի ներքս ՚ի տա
պանն խորագոյն ըստ չափոյ նշխա
րացն որպէս զիննս կն. եան տեղեացն.
նոյնպէս ծունր կրկնեալ սրբոյն Գրի
գորի մեզ հանդերձ՝ զնոյն աղօթս
մատուցանէր առ Ած , զի մի՛ ոք յան

դրգնիցի հանել զնոսա ։ Ամէն Նոյնպէս
եկն ձայն յերկնից թէ զոր խնդրե
ցերն եղիցի. և ոչ ոք իցէ որ հանիցէ
զդրոսա առ՚ի գտանել զոր եդեալես։
և զայս ասացեալ՝ խաղաղացաւ տե
ղին ՚ի մէնջ. և յայտնի եղև փափագո
ղացն նշանաւ քևեռացն ։ Արդ՝ որ
զկնի այսոքիկ է՝ թողաք զայն այլ պատ
մագրի. մինչև դառնայ դարձեալ
պատմութիւնս ՚ի տարօն. զի որպէս
զայլ տեղեաց չէ ինչ գրեալ, նոյնպէս
և զսմա չիշխէ ոք գրել. զի
թագաւորաց ժամա
նակագիրն է ։
Այս Պատմէն Առաջին,
Պատերազմին է։

✠

Արդ՝ մինչ դեռ տրդատ և մեծն
գրիգոր կամէին անցանել և
գնալ առ կոստանդիա-
նոս թագաւորն՝ եկեալ հասին ՚ի գա-
ւառն ապահունեաց՚ի քաղաքագեօղն
մանծկերտ ։ Որքայն հիւսիսոյ զօրս
գումարեալ էին ՚ի վերայ աշխարհին
վրաց, և փախստական արար զիշխա-
նն և եբեր մինչև ՚ի կարնոյ քաղաքն.
և զերկիրն գերի վարեալ տարան իբրև
ոգիս քառասուն և ութ հազար ։
Եւ իբրև էհաս պատգամաւորն վը-
րայ իշխանին առ թագաւորն տրդատ,
և խնդրեաց ՚ի նմանէ զօրս յօգնականու-
թի իւր. և ետ թգրն տրդատ ՃՌ զօրս
՚ի ձեռն ապահունեաց, և առաքեաց յօգ-
նութի Իշխանին վրաց։ Որք երթեալ
յամեցին յամսօրեայ ճանապարհ. որք
և զսակաւ մասն գերելոց՝ դարձու-

ցէն . և երեք իշխան ըմբռնեցին և ա̄-
ծին . և կողմնասայոց թողել տեղւոյն՝
դարձան ինքեանք առ Թագաւորն ։

Իսկ ես աղաչեցի զմեծն գրիգոր գնալ
՚ի վանսն իմ զոր հիմնարկեաց յանուն
սրբոյ կարապետին . իսկ և Թագաւորն
յանձին կալաւ գալ ՚ի տեսութիւն տե-
ղեացն զոր հիմնարկեաց ։ Եւ ելեալ
յայտից տեղեացն գնացաք ՚ի լեառնա-
կողմն՝ և եկեալ բանակեցաք ՚ի գլուխ
արձանին, վասն ընդարձակութեն
վայրացն ։

Եւ երբ եկաք յիննակնեան տեղին
հանդերձ Թագաւորաւն, խնդիր ա-
րարաք սրբոյն անտօնի և կրօնիդեայ ։
Իսկ պաշտօնեայքն ասեն՝ այս ամի է
որ ոչ տեսանեմք զնոսա . և տրտմե-
ցաւ Թագաւորն յոյժ . զի ՚ի վաղնջուց
ցանկայր տեսանել զնոսա ։ Եւ մեծն
գրիգոր առաքեաց խնդրակս զաղ-
բիանոս եպիսկոպոսն հանդերձ եր-
կու սարկաւագօք . տուեալ նոցա
խրատս զայս . ընդ առաւօտն ելանեն

Նոքա ասէ յանտառէն 'ի բլուր ուրեք. կացէք դուք անդ զգոյշ, զի մի՛ զձեզ տեսեալ փախիցեն ։ Որք երթեալ՝ զաւուրս դ՟ ոչ կարացին տեսանել. իսկ 'ի լուսանալ աւուրն հինգերորդին լըճան զձայն սաղմոսերգութե՟ նոցա, զի գային յանտառէն յարեւմտից կողմանէն 'ի քաղցրահամ աղբերէն. եւ էկեալ եկին 'ի բլուրն արեւելական տեղւոյն յարարոցն գեմետրեայ. զոր կոչեիմք յարխ բլուր. զի անդ՝ իսկ էին դարավորք խորհոց նոցա ։ Ի՞Հ ելեալ 'ի գլուխ բլրին՝ սկսան սաղմոսել այսպէս. լուելի արա ինձ Տ՟ր յառաւօտու զողորմութիւնս քո ։ Ի՞Հ աղքիանոս ասէ, հոգի քո բարի՝ առաջնորդեսցէ ինձ 'ի յերկիր ուղիղ ։ Ի՞Հ աղօթեալ անդ անտօն՝ ասէ ցաղքիանոս՝ բարի եկիր ճանապարհ խաղաղութե՟ ։ Եւ նա՛ ասէ, բարձիք գտի զձեզ օթեւանք հոգւոյն սրբոյ եւ ճրագունք լուսոյ ։ Եւ աւետիս ձեզ, զի Տ՟ն գրիգոր եւ որդատիոս՝ 'ի բնակութիւնս ձեր է



կեալ

կեալ են այժմ խնդրեն զձեզ։
Իսկ նոքա ասեն, եւ ձեզ աւետիս․ զի
սատանայ կործանեցաւ․ եւ մեծ կր
կին ուրախութե̃ ելից զարարած
իջմամբ հոգւոյն սրբոյ։ վասն որոյ կո
չեցաւ բլուրն այն աւետեաց բլուր։
Իսկ առաքեաց աղբիանոս զերկուս
սարկաւագունսն աւետաւորս․ զոր
լըւեալ ուրախ եղաք յոյժ․ եւ առաքե
ցաք զնոյն սարկաւագունսն աւետա
ւորս առ տրդատ ՚ի ստորոտ արձա
նին․ որ լըւեալ լցաւ խնդութե̃, եւ
եկն ՚ի վանան հանդերձ գլխաւոր իշխա
նօքն։ եւ ՚ի տեղին ուր զաւետիսն ե
տուն՝ հրամայեաց վէմս ժողովել․ զոր
կոչեմք աւետեաց խաղ։ Իսկ առաքել
սրբոյն գրիգորի զդասս պաշտօնէիցն
եւ զնշան սուրբ խաչին՝ հանդերձ քա
հանայիւք եւ անուշ խնկօք․ որեւ ձայն
պաշտօնէիցն հնչեցուցանէր զանտառն։
Իբրեւ մերձեցաք ՚ի բլուրն՝ նոքա ընդ
առաջ եղեն մեզ․ եւ միաբան ելաք ՚ի
բլուրն եւ աղօթեցաք։ Իսկ յետ ողջու

 նին

նին, ասէ սուրբն գրիգոր, բարւոք գը-
տայք զձեզ առաւօտք խաղաղութեն·
ևնոքա ասեն, բարև եկիր արուսեկդ
արդարութեն, որ զտիեզերս լուսաւո-
րես· մշակ առանց ամօթոյ և աշտա-
րակ բարձրագոյն քան զերկինս։
Եւ համբուրեալ զնոսա յերկար, ու-
պա ելաք յեկեղեցին· քանզի չէր բը-
լուրն հեռի՚ի տեղւոյն· այլ սակաւ մի
բացեալ ընդ հիւսիսոյ կողմանէ որ
հայի ընդ արևելս՝ բարեհամ իսկ և
գիտանոց։ Եւ իբրև ածաք զնոսա
առ թագաւորն, յարուցեալ համբու-
րեաց զնոսա ևնստաւ առաջի վկայա-
րանին, և հայցէր օրհնել ՚ի նոցանէ։ և
նոքա բազում վարդապետութե խօ-
սէին ընդ նոսա, և ուսուցանէին զսր-
բութեան կրօնին։ Եւ եկաց թագա-
ւորն ՚ի նոյն տեղւոջն աւուրս հնգե-
տասան· և կանգնեցին զնշան տէրունա-
կան խաչին մեծ անդամ քարակոփի ՚ի
տեղւի տաճարին, ուր գիսանէանէր· ա-
ռաջի աղբերն ուր զբժշկութին առնէր

հիւանդաց · և տօն ցնծութեան կատա
րէին բազմամբոխ ժողովրդեամբ ։
Որք կուտեցան 'ի տեղեաց տեղեաց ·
և եղեն թըւով իբրև հարիւր Ռ ,
չորս հարիւր քսան · թէպ զչորս թա
գաւորին և զպաշտօնեայս սրբոյն գը
րիգորի՝ զորս թագաւորն հրամայեաց
թըւել և գրել 'ի բուն խաշին · զի լիցի
յիշատակ ազգաց անցելոց ։
Եւ իբրև կատարեցին զամ պաշտօ
մունսն՝ եկեալ հասին զօրքն որք 'ի
վերոյ էին՝ առ թագաւորն , և ածին
ընդ իւրեանս երեք իշխանս և չորս
հարիւր այր ընտիրս · և տեսեալ թա
գաւորն ուրախ եղև յոյժ և գոհա
ցաւ զայ · որ ետ 'ի ձեռս իւր զթըշ
նամիս իւր · և առեալ զնոյն առաքեաց
յամուրն ուղկան ։ Եւ իւրեանք յա
ռաջեցեալ խաղային 'ի բզմ աճուրս ·
և դարձեալ մեծաշուք պատուով և
բազում ուրախութեամբ գային հասա
նէին յեկեղեաց գաւառն ։ Եւ յետ
երից աւուրց ելեալ անտի գային և
Ե Ձ Հա

հասանէին 'ի գաւառն պալունեաց ․
և եկեալ 'ի գեօղն կոճառս՝ քանզի
աշխատեալք էին՝ օր մի հանգիստ
ետուն իւրեանց ։

Արդ 'յորժամ գնացին իշխանքն 'ի
վրան և դարձուցին զգերիսն՝ կողմ
նապահ թողին անդ զիշխանն աղձը
նեաց՝ դուժ անուն նորա ․ և նորա
կոչմու առեալ 'ի թագաւորէն հիւ
սիսոյ վաթսուն հազար դահեկանս՝
գնաց յաշխարհն իւր ․ և այս էմ ջան
նենգութե՝ վասն թագաւորին էր ։

Իսկ այնպէս հմտութբ եկն և գիտով,
մինչ զի զթագաւորն 'ի նեղ տեղին
թակարդեաց ․ բայց առ թագաւորն
տրդատ երեսուն ու այր միայն էր մը
նացել ․ և այլն ամենայն գնացեալ էին
'ի մուշնաճան ։ Արդ 'ի հասարակիլ գի
շերոյն մինչ մեք զպաշտօն մատուցա
նէաք առաջին սրբոյ խաչին զոր կանգ
նեաց իշխանն սիւնեաց հրամանաւ
սրբոյն գրիգորի ․ զի մինչ տրդատ
զիննաձնեանն կատարեաց՝ իշխանն սն

գեղոյն զխոտենից կանգնեաց, և սիւ-
նեացն զկոՃաացն կանգնեաց. և որն
գրիգոր երթեալ որ հներ զխաչն և
յերկոտասանն հիմն եկեղեցւոյ արկա
նէր: Յորժամ ի նոյն աՃուրսն ի պաշտա
մանն գիշերոյն մինչ դեռ զօրհնութիւ
երից մանկանցն ասէաք, և թագաւորն
նստեալ առ մեզ աղօթէր իշխանօքն
հանդերձ, և յուսնէաք բնաւ յիրաց
կասկած. յանկարծակի ձայն ահեղ
իբրև ամպոյ որ յոյժ դղրդէ, եկն
էհաս ի վերայ մեր. և զառաջին կողմն
գեղջն պատեալ էին հեծեալքն, և
զնետօքին հեծեալքն. և սկսան հնչե
ցուցանել զփողս պատերազմացն և
ծնդիւն ասատիկ լինէր շուրջանակի.
ն մնդէր տեսանել զձիոցն փռնչիւն.
Յայնժամ սկսան և իշխանքն մեր ը̄
ռամբ ելանել նոցա ի պատերազմ.
զի լուսինն միջօրեայ էր. բայց ի պա
տերազմէն արգել զնա թագաւորն,
ասելով գիշեր է այժմ. և մեք ոչ գի
տեմք զչափ թշնամեացն: այլ թէ ի

ձը մաս

մատտութիւն կամիք առնել զգործն ,
ելէք վեց հազար ընդ մէջ այգեստա
նեացդ և Թաքերուք 'ի գլուխ արձա
նին մինչև ցառաւօտն . և չորս ռ̃
ընդ հաշտենից կողմն և չորս հազար
ընդ մէջ նոցա գնասցեն առ այգես
տանեօքն ընդ վերին գահոն , և մեզ
ծուղ կալցեն . բայց զձեզ մի իմասցին
և դարձեալ փախիցեն նենգութե . և
'ի մէջ առեալ վտանգեսջիք զնոսա . և
բաժանեալ զզօրսն յարձակեցայ ո̃պ
խորհեցաւ . Բայց Թագաւորն ենրն
գիտէր 'ի փոքր ամլոց ընդ մտեալ
մեօք հանդերձ աղօԹեքն Այծ մ̃ին
'ի սխենեաց զօրայն ընթանեալ պա
տանի մի 'ի հիւսիսական զօրացն՝ եած
առ Թագաւորն . և իբրև տեղեկացաւ
'ի նմանէ իրացն Թէ 'ի քոյ զօրացդ և
իշխանացդ են իւքն , և Թագաւորն է
գերուէհօն , և վասն ունելոյ զքիզէ
ելեալ յիսուն ևուԹ հազարաւ , հրա
մայեաց յայնժամ զօրացն պատրաս
տել զինքեանս յետին աւուրն և մա

ձգ հու .

հու։ Իսկ իբրև առաւօտ եղև՝ սկը
սաւ զօրս կազմել յամրոցս թագաւո
րին 'ի վերայ արձանին։ Իսկ թագա
ւորն հիւսիսոյ հրամայեաց զօրաց
իւրոց՝ ունել զառաջին վեց հազար
սպառազինօք․ զի կամէր արգելուլ
զթագաւորն․ զոր յառաջ եկեալ ար
գելուին 'ի գլուխ արձանին․ որ զբա
զում ժամս ոչ կարաց ելանել 'ի վեր։
Զոր տեսեալ սրբոյն գրիգորի ևյար
տասուս հարեալ ձայն էբարձ և ասէ,
Մկրտիչ յոհաննէս կարապետ Քի՝ չը
տեսանե՞ս զինչ գործեն․ արդ՝ հաս
յօգնութիւն, և արա զզօրս զայս նշա
նաւորս յազգս։ և առեալ զնշխար
ս սրբելոցն տնագրէր 'ի վերայ նոցա։
Նոյն ժամ ուժ առեալ տրդատայ
քաջ անպարտ ձայն արձեալ յօգնու
թիւն կոչէր զՔն կայսերն․ և կը
րեալ զաւազն առաջապահացն էանց 'ի
գլուխ բլրին․ և ոչ 'ի գիշերին թա
գուցեալ էին զօրքն յարուցեալ 'ի մէջ
սուին զայն զօրսն․ և կոտորեալ մա

Ձգ խըս

խստական արարին զնոսա . և զորս
փախուցին՝ իջուցեալ 'ի Հարաւոյ
կողմն անտառին ծով 'ի Թակարդ ար
գելլով կոտորեցին զնոսա անխնայ .
և անուանեցաւ տեղին՝ Թակարդ :
Իսկ զօրքն Հիւսիսոյ որպէս դիպող
ժամանակ գտեալ՝ յարձակեցան 'ի
վերայ գեղջն . և դեռ Հանէին զմեզ
յամրոցն . զոր տեսեալ չորս Հազա
րացն որ 'ի մէջ գեղջնէին, յարուցեալ
փախստական արարին զնս 'ի ներքոյ
գեղջն՝ զոր ոմանք յագորգացն զլա
ջարդս արարին զձաՀատս երկեա
լացն . և բազումք 'ի Հեծելոցն մե
ռան 'ի վիմացն : Իսկ զօրքն մեր ցրճել
զնոսա ընդ այգեմէջն, սակաւք պր
ծեցան 'ի նոցանէ . և անկան 'ի տեղւոջն
վեց Հարիւր այր : Իսկ 'ի Թակարդն
Հազար է Ճ այր . և զոր պարսաւորքն
կոտորեցին, Ը Հարիւր վեց : և ընդ
ամենայն, երեք Հազար Հարիւր վեց
այր : Յայնժամ ապա դարձեալ Թագաւորն
'ի փոքր կոտորածէն՝ եկ 'ի գլուխ ար

հանին. և հարեալ զազդարար փողն
ճնաց անդ մինչև մեծ զօրքն 'ի մի վայր
ժողովեցան։ Եւ իբրև եկին հասին
'ի տեղին, զսուրբն գրիգոր իջուցին յան
տառէն և պահեցին զնա առք ՂԺ։
Իսկ Թագաւորն հիւսիսոյ առեալ
զզօրս իւր՝ գնաց 'ի հայաստանից տափն,
և առաքեաց Թուղթս առ Տրդատ,
եթէ 'ի վաղուէն եկ և տացուք պատե
րազմ. և եղիցի որ յաղթականն 'ի
միջի մերում. զի կամ տացես զիշ
խանս իմ յիս, և զհարկսն հնգետա
սան տարւոյ. ապա թէ ոչ՝ քանդեմ
զերկիր քո սրով և գերութեամբ. Տրդ
զի ծանիցես զխոզութիւն քո զոր արա
րեր առաջին զօրացս քոց։ արդ արա
այժմ պատասխանի։ Եւ ընթերցեալ
զթուղթն՝ ոչ արար նմա պատասխանի.
այլ յարուցեալ գնաց երեսուն հազար
արամբք 'ի պատերազմ։ և երթեալ
յանդիման նոցա իջանէր 'ի մուշեղայ
գեօղն հաշտենից։ Եւ 'ի վաղիւն ընկե
սան ռամզմ կազմել և հնչեցուցանել

զփող պատերազմին. և դռնապանս տե
ղեացն զքաղաքատունեաց իշխանն կա
ցուցանէր։ Նոյ զաջ զօրութեան տայր
'ի ձեռն իշխանին սիւնեաց. և զահենկն
'ի ձեռն իշխանին անգեղտան։ Նոյ ըղ
գահերէց իշխանն կացուցանէր Թիկ
նապահ իւր՝ և այնպ յօրինեցան՝ 'ի պա
տերազմ։ Եւ իբրև ամ զօրքն սկսան
ընդդէմ իւրեանց անցանել՝ ձայն բար
ձեալ արքայն Հիւսիսոյ ասէր, ո արքայ
Հայոց յառաջ մատիր. և իբրև եկին
ընդդէմ իւրեանց՝ սկսան իբրև զմր
ճաճորս քարահատաց՝ կամ իբրև
զուռնաճորս՝ մինն առնոյր և միւսն
ինջուցանէր։ քանզի և արքայն Հիւսի
սոյ զօրաճորէր իբրև զտրդատ և ա
հաճոր։ Նայց 'ի թագուն կոփելն մի
մեանց. արքայն Հիւսիսոյ սկսաւ պա
կասիլ. և գիտացեալ եթէ մնասին ոչ է
քանզի ճոպանաւորէր, և ճապարեալ
ձգեաց զճոպանն և էարկ ընդ աջ
Թիկն և պարանոցն տրդատայ. և այն
չափ փութանակի դարձաւ 'ի կըր

թել զձօպանն, մինչ զի ոչ կարաց
որդատ շարժել զձեռն իւր ։
Յանժամ ուժ առեալ որդատայ՝
մօրակեաց զերիվարն իւր ըղկնի
գեղթաւեհոնի այնչափ փութապէս,
մինչ ոչ տալ քայլս տասն ոտից նր .
և իբրև եհաս նմա, ասէ՝ կատաղի
շուն՝ խառնեցեր զկնի քոյ ջլացդ . և
անդէն բարձեալ զաջ ձեռն իւր՝ և
ջուցանէր զսուրն 'ի վերայ ձախոյ թի
կան նր և անցուցանէր ընդ գօտին .
և զոյն երիվարին հանդերձ գլխովն
երկուս կտրեալ յերկիր ընկէց ։
Իբր ա՛նէր զարմանալի . որ գլուխն
և աջ ձեռն և աջ ոտն գեղթաւեհոնի,
և երիվարին ողն ընդ մէջ հերձեալ
բ. միմեանս թաւալէին ։ Զոր իբրև
ետես իշխանն անգեղտան իւր ա
ծեալ զահեակ թեւն՝ ձայն էբարձ
առ իշխանն սիւնեաց 'ի մէջ ածել ըղը
զունդն այծուց . զի անկաւ քօշն ։
Իբր նա 'ի մէջ ածեալ էհան զզօրսն .
և անցեալ յաջ թեւապեսն հիւսիսոյ՝
ասէ, ամսեղահաչ՝ յառաջ մատիր և

մարտիցուք ։ յայնժամ անձապարեալ
Հիւսիսայինն կտրեաց զգլուխ երի
վայ ին սեւնեայց իշխանին ։ Իսկ Նա
վտանգեալ կած զսուրն փութոյս և
կտրեաց զոտս երիվարին Հիւսիսայ
իշխանին ․ և երկոքեանն յերկիր ան
կեալ բուռն զմիմեանց հարին ։
Յայնժամ ոմն 'ի ծառայից սեւնեայց
իշխանին մղեաց զձին և ընկեց յերի
վարէն իւրմէ ․ և ածեալ զերիվարն
սեւնեայց իշխանին ասէ՝ հեծիր տէր ․
և Նա անձապարեալ երիվարաւն կտ
րեաց զգլուխ Հիւսիսայ իշխանին և
ընկեց 'ի մախաղ իւր ։ Իսկ իբրև ե
տես իշխանն անգեղոան զիրսն՝ և ըզ
զօրսն թէ 'ի փախուստ դարձան, սպա
զձեռն՝ 'ի գործ արկեալ բախեցին ըզ
պատերազմն առ երեարս ․ որ և թա
գաւորն զհետ մտեալ մինչև 'ի մուտս
արեգական՝ կոտորեցին զնոսա անխը
նայ ․ և ոչ ոք ղիմադարձ գտաւ նոցա ․
և 'ի Նուրբ տեղիս գիմնոթեանս առ
նէին առ եզեր գետոյն, որ անցանէր

ընդ մէջ գաւառին Հաշտենից. և բանակեցան անդ յայնմ կողմանն
'ի նոյն գիշերին։

Եւ երբև առաւօտ եղև՝ պատրաստեցան մնացեալ զօրքն հիւսիսականաց, և յարձակեցան 'ի վերայ զօրացն հայոց. և սկսան կոտորել զնոսա։ և այնչափ յանդգնեցան՝ մինչ զիշխանն ծովաց 'ի մէջ առեալ պատեցին բազումք. որ աղաղակեց ասելով, ո՞ւր ես իշխանդ սիւնեաց. հաս ինձ յօգնութիւն։ Եւ նորա հասեալ երբև զսրաթռիչ արծիւ՝ հալածեաց զզօրսն 'ի նմանէ։ և սեսլն զի խոցեալ էին չարաչար ըն̃ երեսօք նորա՝ առեալ տարան 'ի բանակն և անդ մեռաւ։ Իսկ ընդդէմ դարձեալ տրդատայ՝ սպարապետն գեղունհոնի բազում մէքենայիւք իւրովք, և կարէվէր խոցեաց զահեակ թևն նորա։ և նորա բարկացեալ և մռմռեալ երբև զառիւծ՝ յարձակեցաւ 'ի վերայ նր̃, և հարեալ 'ի վերայ գագաթանն ճեղքեաց ընդ երկուս.

և անկեալ զկնի զօրացն փախստականն
արար զնոսա մինչև 'ի Հարք · և այլք
ոմանք հետամուտ եղեն Նոյա մինչ
'ի կայնոյ քաղաքն ։ Եւ Լեբրև դար
ձաւ թագաւորն և իշխանն յարձանն՝
և լցին առմբն գլխոր 'ի տեղին ուր
մբ կարապետներ, մեծ գոհութե մա
տուցին այ · և աւնէին պատարագս
ողջակիզաց սպիտակ զընծայակաց և
նոխազաց, և բազում գառանց · և
տայլին ողորմութե աղքատաց բազ
մաց ։ Եւ իբրև եկեալ ժողովեցան
զօրքն ամենայն՝ համար արարեալ՝
գտաւ սպանեալ 'ի մերոց կորուստ հա
զար և ութսուն · իսկ 'ի նոցանէ,
տասն և հինգ հազար ինն հարիւր յա
ռասուն երկու ։ Նոյա փախստական
եղեալ մինչև 'ի հայք · և իշխանն հար
քայ անկեալ 'ի վերայ 'ի վեց տեղիս կո
տորեաց ութ հարիւր յիսուն և վեց
այր · և 'ի վերս մտեալ 'ի բազում տեղիս
կոտորեցին զնոսա · և որք գնացին 'ի
գաւառն իւրեանց՝ էին վեց հազար ·


իսկ

իսկ մինչ 'ի տարօն մտին՝ էին յիսուն
և ը̅ռ̅ ։ * Այս ամ գործեցաւ 'ի գաւա
նոցա 'ի Հռօմայ . բայց եղև 'ի ձեռն
նենգաւոր իշխանացն աղձնեաց ։
Որք իբրև կացին աւուրս երիս 'ի
տեղիս իննակնեան , ապա խաղացին
միաբան և գնացին 'ի գաւառն ապա
հունեաց, տանելով ընդ իւրեանս զիշ
խանսն որ 'ի բերդին ուղկան . և չորս
հարիւր այր 'ի դիւցան արքունի տայր
արկանել ։ Իսկ իբրև հասաք զօրացն
որ յառաջէին ուղարկեալ՝ հրամայեց
նոցա ունել զիշխանն աղձնեաց և
ծայրաքաղ առնել . զոր արգել մին
գրիգոր 'ի պատուհասիցն . բայց 'ի
պատուոյն հերքեալ մերժեաց և վա
րեաց 'ի գաւառէն հայոց ։ Իսկ զկնի
այսորիկ եթէ իմանալ ոք կամիցի՝
զայլ պատմագիրս հարցցէ ։ Մեզ՝ այ
սօքիկ 'ի մէնջ պատասխանի և ձեզ
բաւական լիցի ։ Բայց եթէ դուք
գալ կամիք՝ երկիրս բարի, վայրքս և
օդս անուշ . և ջուր բազում ։

Երկիր դաշտ և շուրջանակի լերամբք
պարապեալ և թաղում ամրոցօք • եր
կիր խոտաբուղխ և մեղրաբուղխ: և
ոպ մանանայն որ յերկնից իջանէր,
նոյնպ և աստ իջանէ իմն անատուացն,
զոր գազպէն կոչեմք • ※ Եւ զի ձեր
երկիրդ խորշակահար է և հացապա
կաս: ※ Իսկ մերս ամենայն բարու
թեամբ լցեալ • իշխանքն կրօնաւո
րասէրք աղքատասէրք, որբոց խնա
մածուք և սուրբք 'ի չարեաց:
Արդ՝ աղօթեմք ձերովք պահեսցէ
տր զհօտս մեր և զձերդ 'ի
խաղաղութի • շնորհիւ
տն ողջ լերուք 'ի
տր • ամէն •

Վասն թէ ոյք էին որք յաջորդեցին զառաջնորդութիւն սրբոյ Կարապետին, որ կոչի Գլակայ վանք։ 14

✠

Զենոբ եկաց հայր վանացն Գլակայ ամս Ի․ Յետ նորա աշակերտն Անտոնի ամս Լ՝ ՚ի սորա ժամանակին եկն տէրն Գրիգոր ՚ի վանս Գլակայ, և եկաց յաճեմեաց բլուրն առ Անտոն և Կրօնիդէս Դ ամիս։ Եւ գնացեալ անտի ՚ի Մանեայ այրն՝ և կացեալ անդ ամս Է՝ վախճանի ՚ի կենաց ՚ի փառս այ․ Ստեփաննոս աշակերտ նորա ամս ԺԵ։ Սա շինեաց եկեղեցի յանունս Կոճառայ առ յոր դասուցին ողբերն, յորում ոսկերքն Գրիգոր ճգնաւորին պահեաց․ և կացոյց անդ կրօնաւորս վաղուան Եփրեմ ամս ԻԸ․ Յօհաննէս ամս Ժ․ Մարկոս ամս ԺԸ․ Մուշեղ ամս քսան երկու։ Գրիգոր ամս վեց։ Անդրէաս ամս ԺԱ։ Ներսէս ամս Է։ Յօհաննէս

ամս է։ Սահակ ամս ե։ Բարդուղի-
մէոս ամս է։ Աթանաս ամս ժ։
սա էր 'ի ժամանակս Մովսէսի Հայոց
կաթողիկոսի, յորում թվականն ե-
դաւ։ սա էր տեղեակ տումարի ամե-
նայն ազգաց։ Կամիտաս ամս ութն։
Ստեփաննոս ամս վեց։ Բարդողիմէոս
ամս ութն։ Մաթէոս ամս երեսուն։
սա ստացաւ զառաքինութի. և եղև
սիրելի Մուշեղայ իշխանին Մամիկոնէից
վասն որբութե իւրոյ։ սա բազում
կրօնաւորս կարգեաց 'ի վանս գլակայ.
և եղեն առ սովաւ արք երեք հարիւր
ութսուն և ութն։ Ի սորա ժամա-
նակս եկին չորս մարդ 'ի յունաց մբք
և ձգնաւորք, և բնակեցան յանապատի
անդ ամս քսան։ Էին և այլ սուրբք,
և բնակեցան ոմանք 'ի նոցանէ յինակ-
նեան վանն. և այլքն 'ի քար այրն որ
'ի հարաւոյ կողմնէ, 'ի թագուցած
խաչին կողմանն։
Արդ՝ 'ի ժամանակս իշխանութեանն
Մուշեղայ Մամիկոնէից տանն, և 'ի Հայ

րապետութեանն թոթկայ՝ հրաշալի
իմն գործ գործեցաւ՝ ի վանս գլակայ
՝ի դուռն սրբոյ կարապետին ։

Մօխանն արծրունեաց որում կոչեն
վարդապատրիկ՝ ծնեաց բազում եկե
ղեցիս և վանորայս ։ և ունէր կին մի
բարեպաշտօն մարիամ անուն ։ եղև
նմա գնալ՝ ի կեսարիա, էառ զկին իւր
և եած առ հայր նորա, և ինքն գնաց ։
Սա կինն քանզի յոյժ փափագէր տե
սութե սրբոյն որք էին՝ ի վանս սրբոյ
կարապետին, առեալ յաւուր միում
զմանուկն փոքրիկ ի ստեան՝ որ էր
անդրանիկ իւր՝ բազում յօժարութե
գայր ՝ի դուռն սբ կարապետին ։ և ա
ղ չէր յոյժ զկրօնաւորսն մտանել
՝յ եկեղեցին ։ իսկ սպասաւորքն արգե
լուին զնա յայնմ խորհրդոյն ։ բայց
զմանուկն առեալ՝ ի գրկաց տիկնոջն՝
տարան յեկեղեցին առաջի սրբոյ սե
ղանոյն, երկրպագեցուցին առաջի տն
և բերեալ ետուն ցնա ։ Իսկ նորա ա
ռեալ զմանուկն սկսաւ արտասուել

լոյ և ասել՝ վայ ինձ մեղաւորիս որ
զրկեալ եմ ՚ի բարեաց․ ողբացէք զիս
ամենայն կանայք․ տեղի տուք ինձ
արտասուաց իմոց ամենայն ձայնար
կուք։ ծածկեսցեն զիս լերինք և ո_
ղորմեսցին ինձ բլուրք․ գազանք եղ_
կեսցեն զիս, և թռչունք խխթասցեն ը̃ն
մեզ․ հրեշտակք ապաշաւեն զանձնիմ
և դևք յարձակեսցան ՚ի վերայ իմ։
Ողորմեցարուք ինձ սպասաւորք ն̃ք
կարապետիդ և տուք տանել զիս ՚ի
տաճար անդր։ Իսկ ցմնուկն ասէր,
որդեակ՝ ընդէ՞ր բաժանեցար ՚ի գրը
կաց իմոց՝ զիա՞րդ ոչ ողորմեցար մօր
քոյ․ ո՞չ ես ծնայ և սնուցի զքեզ․ և
զիս միայն թողէր։ Իսկ զայս ասա
ցեալ կնոջն՝ հանեալ բազում անու_
շահոտ խունկս տայր սպասաւորացն
և ասէր, առէք զայս և տուք տանել
զիս ինէրքս։ Իսկ պատգամ ուղարկէր
ցմ̃ն Թոմբիկ զի առցէ զիրան և թող
ցէ զն̃մ ինէրքս․ և նա ասէր՝ ոչ ա_
ռեալ եմ զայդ հրաման յառաջնոցն,

և ոչ մեք իշխեմք տանել։ արդ՝ եթէ
վասն համառօտյես՝ ընդունելի է այդ-
չափ աշխատութեանց․ և մի՛ վասն պա-
տասխանւոյս ձանձրանար՝ի մէնջ․ այլ
երթ խաղաղութեամբ․ Եւ նա ասէ, ոչ
այդպէս․ այլ եթէ վասն իմաստութեան՝
ես չերկնչիմ՝ի ձէնջ․ իսկ թէ վասն
թշնամութեան քոյ կարապետին է ընդ-
մէջ, ո՞չ ապաքէն Եւնա՝ի կնոջէ է ծնեալ։
Եւ դարձուցեալ զբան իւր՝ ասէ,
որդ՝ ես մտանեմ առ տր, և զքո մայր-
դին բարեխօս ունիմ․ մի՛ առներ յիս
զցասումն բարկութեան քոյ․ և մի՛
եղէց նշաւակ երկրի․ զի թէ և դու-
զկնոջ կաթն արբեր, գոնեայ և զխ-
ոսձարիս արժանացի․ և զայս ասա-
ցեալ եմուտ՝ի ներքս՝ համբուրելով
զորմս տաճարին․ Եւ գնացեալ ա-
ռաջի որբոյ սեղանոյն ծունր կրկ-
նեաց և ասէ, ոես տր զբեկեալս սր-
տիւ, և ողորմութիւն արա ինձ վիրաւո-
րելոյս․ զի դու ողորմած ես ոչ յիշել
զբարկութիւն քո․ արդ՝ օրհնեալ լիցի


անուն

անուն քո յաւիտեան ։ Ապա իբրև եղ-
արտաքս ՝ խստացան , ոխացան և
տրտմեցան Ը̄ իրան սպասաւորք եկե-
ղեցւոյն ․ և ոչ պատրաստեցին կնոջն
կերակուր ։ Իսկ նա հրամայեաց իւ-
րոց սպասաւորայն պատրաստել
ճաշ կրօնաւորացն ․ որք եկին ՚ի սե-
ղան տիկնոջն ․ և էին արք երեք հա-
բիւր լինսուն ․ Ապա յորժամ ձայնեցին՝
ասէ տիկինն , ով սրբասէրք և փոյթեք
յԱծային պատուիրանին , ուրախ լե-
րուք ընդ իս այսօր ՚ի Տր ․ զի ներեաց
ինձ և կատարեաց զփափագումն սր-
տի իմոյ ։ արդ ՝ օրհնեցէք զիս և ար-
ձակեցէք ։ Իսկ եկեղեցապանն և մի-
ամն ՚ի կրօնաւորացն յարուցեալ ՚ի
դուռն եկեղեցւոյն գնացին ՚ի սուրբ
կարապետն ՝ և ծունր կրկնեալ անդ-
ասէին , ով Տր դու ներես կնոջն որ
գայն գործեաց , և ոչ կանանցն հա-
մարձակեցայ մնալ ․ արդ ՝ արա զնշան
զօրութե քո ՚ի նա ․ զի վկայ լիցի ազ-
գաց և օրէն բազմաց ։ Ապա իբրև ու-

 ղար

ղորկեցին զկինն և ինքեանք դարձան, և մերձեցաւ կինն ելանել զառիվեր լերինն որ 'ի գլուխ սագակայէ և 'ի փոքր ամ[.]ոցն հայի · ետես կինն 'ի հիւսիսական կողմանէ տեսութիւն զարմանալի · ընկէց զմանուկն 'ի գայ ւակն և ասէ, տեսանեմ այր մի գիսա ւոր ընդ ամպս որոտացեալ և ելեալ յեկեղեցւոյն գմբ առիս · տեսանեմ առնա սուր սրեալ և թափուցեալ և յարեան ներկեալ ։ Եւ ընդ բանին էհար զնա, և սատակեցաւ անդէն · զոր տեսին սպասաւորք եկեղեցւոյն ։ [.]աղ հային ելեալ յոյժ բարկացաւ եկեղեցպանին, և որոտեալ արտաս ւեաց բազում ժամանակս ։

Եւ ապա առեալ զնա սպասաւորացն պատրաստեցին նմա գերեզման և ե դին 'ի նոյն տեղւոյն · և կանգնեալ 'ի տեղւոջն խաչ քարեղէն գրեալ 'ի նմա այսպէս · որ յանդգնեցի մարտնչիլ ընդ եկեղեցւոյ ամ՝ այս սուր եղեցի 'ի վե նոյս · և հաստատեալ կայ այս գրով



'ի նոյն

'ի նոյն տեղւոջն:

Իսկ զմանուկն առեալ եւ 'ի դայ
եակն մինչեւ յարբունս էհաս. եւ ա
պա ուսուցեալ արար զնա հայր վա
նացն յառաջ քան զմահ իւր:
Իսկ հայր նորա իշխանն արծրունեց
եկեալ 'ի կեսարիա լըեալ զմահ տղի
նոյն եւ սորջացեալ: Իսկ հայրն մխի
թարեաց զնա. Այլ խորհեցաւ շինել
եկեղեցի՝ բայց գնաց 'ի մանրավանն
վն̃ զնիւթ գտանելոյ. եւ շինեաց անդ
վայելուչ եկեղեցի եւ կոչեաց զանունն
ած̃ածին, վն̃ կնոջ իւրոյ. եւ զարդա
րեաց զնա հրաշալի սպասիւք. նոյնպէս
եւ զսբ̃ կարապետն զգլխոյ վանուն
զարդարեաց:

Նա դարձոյց 'ի սբ̃ կարապետ զկը
ճասս եւ զպարէխ. քանզի իշխան
ամ̃ անօրէն կտրեաց զերկոսեանն եւ
ես գուսանն միոյ. եւ կիւրեղ հայր
վանայն անէծ զնա. եւ յետ սակաւուց
յորս եղեալ իշխանն անկաւ յերիվա
րէն եւ էհան զոգին: բայց որդին թէ

Ձա պէտ

պետ և դարձոյց զաճանսն՝ այլ նոքա
ոչ առին մինչև ցիշխանս այս ։

Արդ այս իշխան կշռեաց ՃԳ հազար
դահեկան ․ և տուեալ տարօնոյ իշխա
նին գնեաց ՚ի նմանէ զերկուսին աւանսն ․
և եւ վանից սրբոյ կարապետին վճա
ռով ։ Այս եւ և երկու աւանս քա
իշխանութեանն սրբոյ կարապետին ,
՚զարտամեա և զգոյն ։

Ընդ նոյն ժամանակս սպանին զոր
միզդ զպարսից արքայն ․ և Ջամբ խոս
րով որդի նորա եկն փախստական
՚ի հռոմ առ մօրիկ արքայն ․ և կնքեալ
քաղդէական հաճառով՝ դարձաւ
զօրօք ՚ի պարսից գործ աթոռն , և
առնու զերկիրն ։

Արդ՝ մինչ՚ի յունաց գայր խոսրով՝
առեալ զմուշեղ զտրն մշու , և զխու
թա զտարօնու իշխանն և զսասնոյ ,
տարաւ ՚ի դվին և հայոց մարզպան
հաստատեաց ․ և տուեալ ՚ի ձեռս նց
զզօրս հայոց Ը հազար , ինքն առեալ
զզօրսն յունաց ՃԺ՝ գնաց ՚ի բաղխաս

տան. և ընդ հայոց հպարտացան բնա
կիլ. այլ գնացին անցին յաճուր միոյ

Ճանապարհ 'ի գաստակերտն
և անդ իջին ։

Իսկ նիհորճէն Նորմիզդ գումարել զզօրս պարսից ութսուն հազար՝ եկն 'ի վերայ մուշեղայ. և նորա քաջալե րեալ զզօրս հայոց՝ հազիւ հաւանե ցոյց մտանել 'ի պատերազմ։

Ետ բանս 'ի բերան զօրացն կոչել յօգնութիւն զքս կարապետն. և միա բան զայս բան ասացեալ յարձակե ցան 'ի վր զօրացն պարսից. և ետ տր զթշնամիս 'ի ձեռս նց. Իբրև գիտացին մուշեղայ թէ թագաւորն է՝ մատեան նիմ. և սկսան թախել իրերաց. յոր յոյժ վաստակեցաւ մուշեղ. և 'ի վեր կալեալ զմուրճն իջուցանէր 'ի վերայ գագաթան նր. որոյ ցնդեալ ուղեղն իջանէր ընդ քիթն. և կտրեալ զգ լուխ նորա եդ 'ի մախաղ իւր.

Իբրև յորդորեալ զզօրսն 'ի պատերազմ. զօրացեալ եդ զնոսա 'ի փախուստ.

և կալան քառասուն և ութ իշխանս կենդանիս. և Համար կոտորածոյն ոչ երևեցաւ վասն բազմութեանն. և ըմբռնեալ յիշխանացն Ճ. որս՝ գարձան 'ի կոտորածէն մեծաւ յաղթութբ: Եւ իբրև ազդ եղև առ խոսրով Թագաւորն պարսից՝ խնդաց յոյժ. իսկ զօրքն յունաց տրամեցան սաստիկ յամօթով:

Արդ՝ իբրև կոչեաց Թաթուլն զՄուշեղ և պատրաստեաց պարգևս տալ ամենայն զօրացն, յղեաց առ խոսրով Մօրիկ արքայն յունաց, (քանզի Թագաւորին փոխան կարգեալ էր զնա.) եթէ՝ գիտեմ դու զայդ, որ արքայիդ սպանման սպառնայ Մուշեղ: Եւ նա խորհեցաւ գործել նմա դարան մահու. և առաքեալ կոչեաց զՄուշեղ առ ինքն. և իմացեալ բանն խոսրովու՝ ազդ առնէր նմա զնենգութի եղբօրն իւրոյ: Եւ Մուշեղ առեալ ընդ իւր քառասուն այր միայն առանց ուրուք, և կազմեաց զնոսա զօրէն պա

տերագմի. և սուսեր ընդ մէջ ածեալ
այնպէս եկին առ Թագաւորն երիվա
րօք մինչ 'ի դուռն խորանին. և ետ
խստութիւն տրեալ պատասխանի, և
'ի լոյս ածեալ զգայթն մահու Թքա
կոծեայց զանմտութի՛ նորա. և յարու
ցեալ մեծաւ բարկութեամբ ել 'ի Թա
գաւորէն: և յերբև լևաւ Թագաւորն՝
երկեաւ 'ի նմանէ. զի մնացեալ էր:
Իսկ իշխանն մուշեղ առաքեաց առ
յունաց զօրապետն և ասէ, կամեցայ
գուք նենգութեամբ սպանանել զիս.
արդ մի՞ զայթուցանէք զառիւծն 'ի
քնոյ. և մի զգայլ՝ որ զգայրս իւր մո
ռացեալ է: ապա թէ ոչ՝ որ զութսուն
հազարն յաղթահարեաց, կարող է և
զեօթանասուն հազարն յաղթահա
րել: և ինքն Թողեալ զզօրսն 'ի գլխն՝
'ի բաց եկաց 'ի մարզպանութենէն. և առեալ
զզօրս իւր որ 'ի ժամ կոնեան տանէն՝
էին 'ի գաւառն իւր: Իսկ յետ սակա
ւուց ետեսան փոքաս զմորիկ, և ինքն
նստաւ յաթոռ նորա. զոր լուեալ խոս

բոլոր՝ գնաց վրէժխնդիր լինել մոր
կայ․ և եկեալ անցանէր ընդ կարնոյ
քաղաքն։ Եւ առաքեաց առ Մուշեղ իշ
խանն տարօնոյ թէ՝ արի եկ ընդ իս ՚ի
դուռն Թագաւորին յունաց․ ապա
թէ ոչ՝ յորժամ դառնամ ապականեմ
զերկիրդ քո․ եւ զքեզ եւ զընտանիս քո
տանիմ կապանօք ՚ի դուռն արքունի։
Իսկ նա ոչինչ տուեալ պատասխանի՝
սկսաւ զերկիրն ամրացուցանել։
Իսկ իբրև գնաց Խոսրով եւ էառ աւար
և գերութիւն յերկրէն յունաց՝ ան
ցեալ գնաց ընդ կողմանս բասենոյ։
Բայց յորժամ եկն Խոսրով ՚ի քաղաքն
կարնոյ՝ զՄիհրան ուղարկեաց զօրօք
՚ի տարօն, զի կալցէ զորդեր նորա եւ տար
ցէ ՚ի բալխ․ և զտեղին զորս նա հաս
տատուներ ՚կործանել հրամայեաց,
Եւ զկրօնաւորսն սպանանել։
որք եկին եւ արարին
զիրսն ։

✠

Գլուխ պարսից պատմութե՛ն. և գալն միհրանայ ՚ի տարօն երեսուն հազարով, և կոտորել զնոսա գայլուն վահանայ յոձ քաղաք։ 15

Յառաջին ամի թագաւորութե՛ն փոկասու՝ մեռաւ մօրիկ դաւով ՚ի ծառայէն իւրմէ. որև նստաւ յաթոռ նո. յիշեաց խոսրով զուխտն իւր և ենհեաւ աւար և գերութիւն. և բրեաց թագուժ աւանս և քաղաքս, և ելեալ գնաց։ Նաև զմիհրան քեռորդի իւր՝ առաքեաց ՚ի տարօն Լ հազարաւ. և իբրև եկն ՚ի գաւառն հաշտենից՝ կալեալ զոմն իւրեանց առաջնորդ՝ եկին մինչև յարձանն։ Եւ իբրև ընթերցան զգիր արձանին՝ խորտակեցին զարձանն քարեայ՝ և ինքեանք ութ հազար այր գնացին ՚ի մեղտի և յաստեղծն ամրոցն. իսկ ԻՃՌ դեռ արձան անդր կային դիտելով զփա



խու

խուցեալսն ։ Եւ իբրեւ գիտացին
եօթն արքն որք էին խոստաձարակք
՚ի վանսն, զամենայն կրօնաւորսն փա
խուցին. յորոց ոմանք փախեան եւ ո
մանք մնացին ։ բայց պօղիկարպոս ու
ղարկեաց զամենեսեան յամուրսն ող
կան. եւ ՚ի տեղւոջն զհայրն Թոթիկ
եւ զըսպասաւորսն եկեղեցւոյն միայն
արգել. եւ հրամայեաց սպասաւորացն
պատրաստել զընծայսն տէրունական
մարմնոյն ։ Եւ իբրեւ մատուցին ըզ
պտրագն եօթներին խոստաձարձակքն՝
հրամայեցին նշանագրի միում որ ե
կեալէր ՚ի յունաց՝ գրել զառ ՚ի յին
քեանց ասացեալսն ։ եւ ինքեանք տա
րածեալ զձեռս իւրեանց առաջի
որբոյ սեղանոյն սկսան
ասել այսպէս ։

Տր ած զօրութեանց եւ արարիչ ամ
լինելութեանց, որ ստեղծեր ըզ
մարդն ՚ի պատկեր քոյոյ բարերարու
թեանդ, եւ կացուցեր զնա իշխան ՚ի վր
երկրի. եւ ետուր նմա զփառս եւ զպա

ծր տիւ

տիճ յաճախտենական անմահ · ուստի
նախանձու բանսարկուին մտին մեղք
յՏն, և'ի մեղաց մահացուն, և'ի մահաց
մանէն կորուստ յաճախտենական · ուս
տի զորդեգրութիւնն որ յայ էր ընծե
ցաք պատրանօք մեղացն · ուստի փըր
կութեան ճանապարհն բարձեալէր
և մահ թագաւորեալ : Այլ դու Տր
գթացար 'ի ստեղծուածս քո ծայրին
ձեռացդ, և տապեցեր զմիածին որ
դին 'ի փրկութի աշխարհի · որ եկն և
ծնաւ 'ի սբ կուսէն 'ի մեր նմանութիւն
Որդ յիշեմ զգինս արեան քո · և փըր
կեմ 'ի ձեռաց նեղչաց ըղհաճատա
ցեալս անձան քում : Ձգեմ զախա
ծածուկ աչքո 'ի վր բանաւոր փա
րախիս այսորիկ · և մի տար զծառան
գութի քո 'ի բնակութի անհաճատից :
Տէր Տր անձանց մերոց մասն ժա
ռանգութեան 'ի վերինդ երուսաղէմ ·
զի վն քո մեռանիմք զօրհանապազ :
Լսր Տր ձայնի աղօթից մերոց, և
խոնարհեցո զունկն քո 'ի մաղթանս


ծա

ծառայից քոց, բարեխօսութբ սրբոյ
կարապետին և մկրտչի ։ Ի սմանէ
դեւք պատկառեսցին, ոչ իշխելով դըժ-
րել սպասաւորաց սորա ։ Եւ որք
գայցեն ՚ի սա մտ կարեաց անձանց եւ-
րեանց, ողորմեսցիս նոցա և բժշկես-
ցես յիւրաքանչիւր ախտից ։ Եւ որք
հաւատով յիշեն զանուն սբ եկեղե-
ցւոյս ՚ի նեղութե իւրեանց՝ կամ ՚ի
վիշտս՝ կամ ՚ի ցանկութիս չարեաց՝
կամ ՚ի ըլկմունս գիճաց՝ կամ ՚ի գե-
տավիժութե՝ կամ ՚ի գազանաց բե-
կութիւ՝ և կամ ՚ի վիշտս անհնարինս
որոգայթից, դու տր ած մեր՝ ըղձի-
ցես նոցա քոյով մարդասիրութբդ ։
և ողորմեալ զերծուսցես զնոսա ։
Զի դու կարօղես ամենայնի ։ և քեզ
փառք յաւիտեանս ։ ամէն ։
Եկն ձայն յերկնից որ ասէր՝ եղէցի
ձեզ որպ և կամիք ․ և որ ոք մտ անուան
իմոյ և կարապետիս՝ պանդխտութբ
քաղաքավարիցն, հատուցից նոցա ըզ
հատուցումն բարի յաւուր այցելու-

ձժ թե

թն․ և զմեղս թողից նոցա։ և դուք էք
կայք 'ի տեղիս լուսաւորս․ զոր պատ
րաստեալ էք ձերով ձգնութբդ ։ և
լըծեալ սրբոյն երկրպագեցին առջին
սրբոյ սեղանոյն․ Եւ արտաքս ելեալ
պօղիկարպոս գնաց առաջի սրբոյ խա
չին և սկսաւ աղաչել զած վասն փըր
կութեան աշխարհին՝ զեկեալ թշնա
միոն խորտակել, և մնալ աղքատաց
'ի տեղիս իւրեանց։ Եւ յանկարծակի
հասեալ զօրքն պարսից․ իբրև տեսին
զպօղիկարպոս՝ հատին զպարանոցն նր
և ընկեցին առաջի խաչին ։ և եկեալ
փութապէս 'ի դուռն եկեղեցւոյն՝
տեսին զկրօնաւորսն յարտասուս և
'ի պաղատանս առ ած․ և յարձակեալ
'ի վերայ նոցա սպանին առ ժամայն
զեօթնեքին խոստաւորական․ որոց ան
ուանք են այսուիկ, Թէոփիլաս․ Պօղի
կարպոս․ Սիմէոն․ Յօհաննէս․ Եպի
փան․ Պետրոնիոս․ Նարեսոս ։ Սոքա
եօթնեքին կատարեցան 'ի զօրացն պար
սից միհրանայ․ յամսեանն քաղոցի 'ի
ձժա չորսն

չորսն՝ ընդերձկս աւուրն ։ Յայն լին-
քեանք զօրքն պարսից մնացին անդ-
մինչև ցառաւօտն · բայց զդուռն՝ ե-
կեղեցւոյն ոչ գտին · զի ծածկեաց
տր ՚ի նոցանէ · և սկսան միմեանց հարկա-
նել · և զարհուրեալք ՚ի դիմացն փա-
խեան ՚ի տեղւոջէն ։ Իսկ նշխարք սր-
բոցն կային անթաղ զաւուրս երիս ·
քանզի փախեան ամենեքեան · Այլեւ
երից աւուրց եկին սպասաւորն եկե-
ղեցւոյն և Ժոթիկ հայրն՝ և տեսին
զնա զի վախճանեալ էին՝ յարտասու-
հարեալ տրտմեցան յոյժ ։ Ապա առեալ
զնշխարս նոցա ելուցին ՚ի մէջ դրախ-
տին ՚ի կողմն հարաւոյ, և եդին զնոսա
անդ առ անտօն և կրօնիդէս, որք և
լեալ էին ՚ի կեսարիոյ զկնի սրբոյն գրի-
գորի · և կանգնեալ խաչ ՚ի վր նոցա՝
բազմաց բժշկութիւն լինէր ՚ի տեղւոջն ։
Իսկ ումանք հասեալ յիշխանէն մուշե-
ղայ տեղեկանալ վն զօրացն · և իբրև
տեսին զնոսա կոտորեալս՝ հիացան
յոյժ, և փութանակի երթեալ պատ-

մեծին իշխանին Մուշեղայ. և Նորա ըն
ճեալ՝ զերիս աճուրս անկեալ դնիւր
անխօս իբրև զմեռեալս: Իսկ զօրքն
մատուցին նմա Թուղթ քրիստոնէա
կան մխիթարութե՟ և ասեն, Ճշմարիտ
շառաճիղ երանելի յուսոյդ երջանիկ
սպարապետ, մի տրտմիր վասն Նոցա.
զի աղօթիւք իւրեանց՝ ամուր աշտա
րակք եղեն աշխարհիս, բարեխօսք
և օգնականք առ ա՟ծ: Բայց դու առա
ճել գոհութի՟ մատո՟ ա՟յ, որ 'ի քո ժա
մանակս յայսքան աստիճան առաքի
նութե՟ հասին. և հանգստեամբ փո
խեցան առ ա՟ծ մարտիրոսական ա
րեամբ. յաշխատութե՟ 'ի հանգիստ. 'ի
խոտաբեկ կենացս 'ի դրախտն փափ
կութե՟. գոլով մեզ միշտ բարեխօսք:
Որդ՝ արի սթափեա՛, և զեկեալն 'ի վը
մեր զմիհրան ուղարկեա՛: Եւ Նորա
իբրև 'ի քնոյ զարթուցեալ՝ հրամայեաց
կոչել առ ինքն զվահան, զոր իշխան
կացուցեալ էր տարօնոյ, մինչ ինքն
մարզպան էր. և ասէ ցնա, որդեա՛կ վա

Հան՝ գիտես դու զահուրս կենաց
ելմանց․ զի այս Ծ̅Նի ամ է՝ որ ես պատե
րազմ եմ մղեալ․ և սպառիլ սրբնլեմ
զքիրտն ՚ի Ճակատէս ։ Իսկ այժմ ծեր
եմ և դողդոջիմ․ և օգնական իմ ած է
և գնա․ և այլ ոչ ոք։ զի որդին իմ մե
ռաւ երկոտասանամեայ ։ Որդ՝ դիր
ծրդեակ զայս ՚ի միտ քում․ եթէ մի
եկեղեցւոյ մեռանիս՝ մարտիկ հանես ։
Իսկ եթէ ՚ի վերայ մարմնաւոր ընչից
իջանես ՚ի մարտ, և այն գործ քաջու
թեան է ։ Օրինաց այլ ժառանգ ոչ ունիմ․
և երկիրս քեզ եղիցի եզաւակի քում։
Որդ՝ արի և գնա և իմաստութեամբ
զամ գնա․ և մե կարապետն եղիցի
քեզ օգնական և պարիսպ․ և աղօթք
մե կրօնաւորացն յաջմէ և յահեկէ ։
Եւ վահան յանձին կալեալ զիրսն
սկսաւ զեսպանս կազմել և ուղարկել
առ միհրան․ զի հաշտեսցի և գնասցէ ։
Իսկ նա ասէ, ոչ․ այլ մինչ զերխանն
մուշեղ կալեալ տարայց առ արքայն
պարսից։ Եւ վահան առաքեաց և ասէ,

ձմգ եթէ

եթէ զերկիրս ինձ տաս իշխանութե՟,
ես տամ զիշխանն մուշեղ՚ի ձեռս քո.
և ես կամիմ գալ առ քեզ ապըստամ
բութե՟ ՚ինմանէ, և հատանել զեր
կիւղն ՚ի մէնջ։ Իսկ նորա արձակեալ
կոչեաց զնա փութով. քանզի յօժարէր
իւրացն. և ինքն իջանէր ՚ի մուշնաւան.
իսկ մուշեղ յամուրն ողկան ։ և այն
զօրքն որք զկրօնաւորսն կոտորեցին՝
անցեալ յաստեղօն ամուրն՝ կային
աւուրս երկուս և ոչինչ կարացին
առնել՝ ապա երթեալ կացին առ միհ
րան. և մատուցին նմա զտ՟մ ձև ամ
րոցին. և նա խնդրեաց ՚ինմանէ զաս
տեղօն ամրոցն ։ ասէ վահան ոչ այդ
պէս տէր. այլ տուր ՚ի ձեռս իմ դ՟ռ
տյր ,որ գնամք ՚ի վե՟ ամուր բերդիցն,
ուր մտերիմք նորանն և գանձքն.
գուցէ թառնայցեն ևչտայցեն ՚ի ձեռս
իմ, ապստամբեալ զնս կարծելով։
Այլ այժմ երթիցուք նախ յօձ քա
ղաք և յայլ ուրեք ։ Իսկ միհրան տը
ճեալ ՚ի ձեռս նորա ՟Ր հազար ընտիր


առն

առն և ձիոյ. և իբրև գնացին 'ի դուռն
յօձ քաղաքին, դարան մահու գոր
ծեալ վահանայ բանս տրտր քաղա
քին ներքս առնուլ զզօրսն պարսից.
և քանզի մերձէր մուտ քաղաքին՝ 'ի
ժամուն սակաւք մտանէին. և որք 'ի
դուռն անցանէին՝ զայն 'ի տուն առնել
'ի զգեստուցն կողոպտէին. և զզօ
րուն կոտրեալ արտաքոյ պարըսպին
յաներևոյթ տեղիս ծածկէին. և 'ի
ժ̃բ այրէն լսուն միայն թողեալէր 'ի
գեօղն կոչեցեալ հարցս: Նոճ պատ
ճէր եւ նոցա թէ յորժամ զձեզ ու
ղարկեմ 'ի միհրան, գնացէք և ա՛յլ
զօրս ածէք. և արարին այնպէս: զի
գնացին 'ի միհրան և առին 'ի նմանէ
ռ̃ հազար այր ընտիր և եկին առ վա
հան. և նա այնպիսի գործ հնարեաց՝
զոր ոչ գիտացին պարսիկքն:

Իրդ՝ յորժամ մօտեցան 'ի դուռն
քաղաքին՝ տրճեալ վահան քաղաքա
ցեացն զպարսից զօրաց զերիվարսն
և զհանդերձսն՝ 'ի դուրս կոչէր զնս.

և խրատ ետ եթէ՝ յոր ժամ՝ նոքա ըզ
ձեռք հայերն՝ դուռք միաբան'ի քաղաքն
դիմեցէ · և'ի ներքս մտեալ զայղ
թուլծն փողն հնչեցէք · և զդուռն
քաղաքին լիբաց թողէք · զի կարծի
ցեն թէ առին զքաղաքն · և արարին
այնպէս ։ Եւ երբ և տեսին պարսիկքն՝
թէ դիմեցին'ի քաղաքն, յննդացին յայժ
և դիմեցին յներքանք ես'ի քաղաքն և
սկսան մտանել'ի նա · իսկ փախան փու
թով ընդ առաջ եկեալ զօրացն՝ անե
տես տայր նոցա · և ի այր'ի պարսիկ
զօրացն անհնարիրս առաքէր առ
մհրան թէ առաք զքաղաքն · և ինքն
դարձաւ զհետ զօրացն պարսից ։
Եւ երբ և մտին բազումք'ի քաղաքն
և այլքն դեռ մտանէին՝ սկսան կաս
կած առնուլ զօրացն · և կամէին յետս
դառնալ · և զհետ մտեալ փախանայ
սկսաւ կոտորել զնոսա և'ի մօրին ը
նուլ ։ և ինքն աստի և քաղաքացին
անտի ։ Եւ այր մարահեղձ արարին · և
զայլսն'ի քաղաքն արգելեալ տայր կոտ

Ճժէ րոլ

րել զգլուխսն և 'ի պարիսպն հանել ,
և համար արարեալ յաւուր յայնմիկ
սպանելոցն՝ գտին վեց հազար գլուխ .
հինգ միայն պակաս ։

Եւ հրամայեաց զամենեցուն ըղ
ձիթն և զթլփատոսն կտրել . և ինքն
առեալ զզօրս իւր արս Է հարիւր՝
գնաց 'ի մուշ . և ԻՌ թողեալ 'ի յանցս
մեղտոսյ . և ԺՌ այր աշտենաւոր թո
ղեալ 'ի սանասայի ծմակն . և ինքն ԺՌ
առեալ գնաց 'ի մուշնաւան 'ի միհրան ։

Եւ մտեալ 'ի սենեակն խօսեցաւ ը
նմա այսպէս , ես փախստական եկի
առ քեզ 'ի զօրացն . զի ոչ 'ի քաղաքն
թողին զիս և ոչ աւարամասն ետուն
մեզ . այլ և զիմ զօրս 'ի քաղաքն արգե
լին . և ես գամ առասիկ փախստա
կան ։ Իսկ միհրան խորհեցաւ ուղար
կել 'ի վերայ նոցա հազար այր . և նա
աւք՝ և 'ի քէն իսկ ապստամբեալ են
և զաւար քաղաքին և զկապուտ՝ ա
ռեալ կամին անցանել 'ի յոյնս ։

Եւ բարկացեալ միհրան առաքեաց

'ի վերայ նոցա երկու հազար այր. և
վահան խրատ տայր զօրացն՝ 'ի գիշե
րի մի անցանել ընդ գետն մեղտայ.
այլ լռելեայն առնել և 'ի վաղիւն ապա
գնալ. գուցէ որ թշնամի յարձակի
ցի, և դուք չէք ընտել վայրացն։
Նա՛ ասէ ցնոսա, հազար այր գնասջէք
ընդ ծմակն, և հազար ընդ դաշտն.
և ես նոցա առաջնորդս. և ինքն ել
'ի միհրանայ գնալ ուղարկել զնոսա.
Նա՛ իբրև գնացին յայն տեղի՝ ուր
բաժանեին՝ առաքեաց հարիւր այր
զհետ նոցա որ ընդ ծմակն գնացին.
և ինքն առեալ Ճ այր դնայր զկնի նոցա։
և իբրև գնացին յեզր գետոյն մեղտայ
յայնկոյս՝ իջոյց զնոսա 'ի բուն առնել.
և ինքն 'ի պատրաստի արարեալ զգա
րանակալսն՝ հրամայեաց ծառայիցն
կտրել զերիվարսն արօտոյ պատճա
ռաւ. և անհոգս արարեալ զնոսա
յանկարծակի հընչեցուցին զփողսն
յետոյ և յառաջոյ. և 'ի մէջ առեալ
իսկոյն բարձին զգլուխս նոցա և ըն



կե

կեցին՚ի գետն․ յորոց և ոչ մի ոք կա
րաց զերծանիլ․ և զերիվարսն հրա
մայեաց՚ի ծմակն տանիլ։ և մինչ նոքա
զայն պատերազմն վճարեցին և յա
ռաջ եկին այլոցն, և նոքա դեռ չէին
եկեալ ՚ի ծմակն․ և կացին մնացին
մինչև նոքա եկին և յայնկոյս անցեալ
իջին․ զի զայն խրատ տըւեալ էր վա
հան։ Իսկ իբրև անհոգս եղէն՝ ապա
կալեալ զխելս կամրջին՝ ձայն սաս
տիկ հնչեցուցին շուրջանակի զնո
քօք․ և սկսան անխնայ կոտորել ըզ
նոսա․ և մի ՚ի նոցանէ թափուցեալ
՚ի մօրն և հեծեալ յերիվարին փախ
չէր ՚ի մուշ․ որոյ զհետ մտեալ եր
կուց ումանց՝ և անցեալ յայնկոյս գե
տոյն ըմբռնեցին և ջախջախեցին ըզ
գլուխ նորա։ Իսկ միւս ընկերն ա
ռեալ աճապ տայր ցմիւսն և ասէր,
պարոնից խորտակարարդ, ամ. զաղս․
և կոչեցաւ անուն տեղւոյն՝ առ աղս
մինչև ցայսօր․ որև անճանեցաւ
՚ի վահանայ․

Ծի Իսկ

Իսկ վահան ածեալ զոմանս 'ի նոյնէ
'ի մօրն, և այլ ոչ կարացին հանել ըզ
նոսա անտի՝ այլ հեղձան 'ի նմա. և
որք 'ի ցամաքն էին՝ կոտ·եցին զգլուխս
և զթլփատս նոցա և պահեցին. և ա-
պա յետոյ զգլուխն 'ի մօր անդր և
'ի դաշտն ընկենուլն. և զ Ռ̄ հազար
երիվարսն ետ տանել յողնու բերդն.
և ինքն 'ի վաղիւն եկն առ միհրան ։
Եւ հրամայեաց ծառայիցն ձայն առ-
նել՝ և զմիհրան կոչել. և նա վ̄ճ խօ-
թութ̄ն 'ի սենեակն եմուտ, և զնա
միայն թողոյր 'ի ներքս. և վահանայ
դռնապան լեալ՝ զենեալ իշխանն
փարձուցանէր 'ի դրանէն՝ ասելով,
հայոց մարզպանն չկարաց գալ 'ի ձայ։
Եւ նոցա ժողովեալ 'ի տաճար մի Ը̄
գլխի մոխն. և վահանայ առեալ զմա-
խաղն յորում քիթքն և թլփատքն
կային, ետ բերել առաջի միհրանայ.
և նա տեսեալ զարհուրեցաւ. և ասէ,
զինչ է այդ, զի՞յց տուր ինձ. և պատ-
մեաց նմա կարգաւ զամենայն, և ոչ

ձիա մի

մի բան թաքոյց 'ի նմանէ զոր ինչ ա-
ւարեալ էր: Իսկ բարկացեալ միհրա-
նայ՝ էառ զտէգն 'ի ձեռանէ ծառային
և կամէր հարկանել զվահան. Եւ նր
ձգեալ զձեռն 'ի սուրն որ կայր ա-
ռաջի՝ կտրեաց զթլփատն միհրանայ
եդ 'ի բերան նորա, ասելով. Դո՛ւ ես
նախատէր զած՝ դո՛ւ ես որ զկրօնա-
ւորսն իմ զսիւնեան աշխարհի՝ ետուր
սպանանել: Իսկ կտրեալ զքիթն ցու-
ցանէր աչացն. և պատառեալ զփորն՝
ետ ծառային իւրոյ հանել զլերդն և
դնել 'ի բերանն. և հարեալ զդանակն
ի փորն ետ թողուլ 'ի ցից: Բայց մինչ
լոկ զթլփատն կտրեալ էր՝ ասէ,
տո՛ւր բանից նիշ և պատճէր 'ի պար-
սիկն որ յապահունիս, և ես ապրե-
ցուցանեմ զքեզ. Եւ նա ետ նշան բա-
նից և պատճէր բազում երդմամբ.
զոր երկոքեանն միայն գիտէին:
Իսկ իբրև ասաց զիրսն՝ ապա կտ-
րեալ վահանայ զգլուխ նր, եւ ծա-
ռայիցն առնուլ զարիւնոտ զգեստ նր

և պահել․ և զգետինն մաքրեալ յորե
նէն՝ կողմնեցուցին զնա 'ի մահճին
և ծածկեցին քնոյ պատճառանօք։

Իսկ ինքն ելեալ կոչեաց զպարսիկ
դպիրն միհրանայ 'ի սենեակն, և ետ
գրել 'ի միհրանայ ողջոյն և բանից նիշ․
եթէ յետ երից աւուրց էլ 'ի բլուրդ
որ 'ի վերայ կոյթ ձորոյ՝ հազար ա
րամբ միայն․ զի տեսցուք զմիմեանս․
և գրեաց դպիրն ըստ ասաց վահան․
և եդ 'ի վերայ զմատանին միհրանայ։

Իսկ կոչէր 'ի հաւատարիմ ծառայից
արս յիսուն՝ ետ տանել զթուղթն
առ վաչիր որ զհազար այլն ունէր․
որք և առեալ գնացին։ Իսկ վահան
կոչեաց զմըրիրանն և ասէ, երթ կո
չեա զայս անուն իշխան․ և երթեալ
կոչեաց․ և բերև զայր իշխանն և մնա
նէր ընդ փողոցն խաւարչտին՝ զի այր
ատի և անտի կային․ և մինչ կամէր
մտանել ընդ սենեակն՝ ածապարեալ
կալան զփողոցն զի մի ձայն բարձցէ
առ միւսն․ և հարեալ դանակաւ 'ի

 սիրտ

սիրտ նորա՝ ձգէին ՚ի միւս յարկն․ ուր
և զներքնրակն և զդալիքն զմն պատճա
ռոյ չեւ տանել ՚ի բանտն։ և ինքն խա
բէութեւ կոչէր զիշխանսն ՚ի խորհուրդ,
և նենգութեւ այնպէս առնէր։ և սպան
յաճախ յայնմիկ իշխանս ութսուն
և Ը։ Իսկ երբև վճարեցան իշխանքն՝
դնաց ինքն ՚ի տաճարն ուր զօրքն էին
ժողովել․ և ետ հանել արտաքս զեւլն
և զայլ գաւառի մարդիկն․ և ինքն
սկսաւ փրանգել զմնացեալ զօրսն ա
սելով, արժանէր ձեզ զմարգարէութ այ
յաւէտն մարդասիրին գողանալ․ արդ՝
հրամայեալ է ձեզ ամենեցուն մերկա
նալ, մինչև ցուցանիցէք զնա ։
Իսկ հանել զհանդերձսն ամենեցուն
արդ եւ զնոսա յերկուսին տաճարսն
՚ի ԺԶ ութսուն այր․ և փակեալ ըզ
դրունս տաճարացն ետ բերել զգը
լուխն միհրանայ․ և կախեալ Ը երդն
ցուցանէր նոցա և ասէր, այս այն գը
լուխն է՝ որ խորհէր զսրբոյ կարա
պետի զհնժմ լինէր առնել, և զկրօնս
Ծ իդ Հոյսն

ճորսն հրամ այրել : Եւ զայս ասա-
ցեալ հրամայեաց վառել զերկոսին
տաճարսն , և ասէ՝ դուք ինձ վնաս
շատէք արարեալ, որք զտաճարսն իմ
այլ այրելէք տրճեալ. բայց թէ կամի-
ռծ և ոչ կարապետն՝ ես զայս փայտ
ընդ ձեր և ընդ ձեր թագաւորին կա-
ռափն հանեմ. զի ես աշխատեալ եմ
և զտաճարս շինեալ. և դուք մերկէք
և ցրտացած : Արդ՝ վասն իմ մեղայն
թողութն և վնիմ հարանցն՝ ջեռա-
րեք այսօր և մի ամաչէք. և տուն-
այդ գերեզման ձեզ եղիցի. շնորհե-
լով պարսից արքային: և այնքան բոր
բոքեաց բոցն ճարպոյն, մինչ զի քա
ղաքն ամ արբեալ եղև 'ի հոտոյ ճեն
ճերացն : Եւ ինքն ժողովեալ զկա-
պուտ նոցա և զգանձս՝ ետ տանել
յամուրն ողկան. և զիշխանն մուշեղ
ետ ածել 'ի քաղաքն. և ինքն առեալ

երեք հազար այր՝

գնաց ընդ առաջ

վաշխրայ :

Ճի և　　　Եւ

Եւ երթեալ 'ի մէջ լերինն ընդ երիս դիհս պարան գործեաց. և զդպիրն և զնրճիրակն առաքեաց առ վաչէր զի կոչեսցեն զնա գալ անդր. և գնացեն նք կոչեցին զվաչէր, որ իջեալ էր եզր ծովուն. բայց Նրճիրակն և դպիրն ոչինչ գիտէին զիրացն. զի վահան ոչ եթող զնոսա մտանել 'ի զօրսն. և յոր ժամ այրեաց զնոսա 'ի տաճարին. 'ի պատճառս իրաց՝ յայլ տեղիս առաքեալ էր զնոսա, զի մի գիտասցեն զիրսն : և զի զհանդերձս իշխանացն տեսեալ՝ կարծէին թէ միհրանեանքն են :

Արդ՝ իբրև գնացին և զվահանայ առաջեալսն պատմեցին նմա որ թէ յերեսաց միհրանայ, առեալ վաշ իրայ արս Ռ հարիւր, եկն 'ի վերայ լերինն : և իբրև մերձեցաւ 'ի տեղին՝ եթող անդ արս հարիւր իբրացէ, ասան այլոց թշնամեաց. և եկեալ եմուտ 'ի վրանն առ վահան. կարծելով թէ միհրանն է : Եւ իբրև ետես զնա վահան՝ առէ

ճիզ ցնա,

ցնա, վաշխր, զինչ եղեւ 'ի մէջ. 'ի պարսից Համառօտս կամիք դարձուցանել զերկիրս Հայոց ։ և Հրամայեաց արգելուլ զզօրսն 'ի Հեռուստ. և ըղ վաշխր գանեաց յոյժ, մինչև առաջէ 'ի Նմանէ Նշան բանից կոչելոյ զզօրսն. և 'ի Հարկէ ցաճոցն ետ Նշան բանից առ զօրապետսն և առ իշխանսն գալ փութով 'ի տեղին ։ Իբր կոչեաւ զպարսիկ դպիրն ետ գրել այնպէս՝ թէ գայցեն 'ի վաղիւն. զի յոյնք ասէ գալոցեն 'ի վերայ մեր. և տուեալ ըղ մատանին վաշխրայ՝ ուղարկեաց ըղ թուղթն յայն զօրսն՝ որք Հեռի էին. և դարձուցեալ զկոչնականսն յայն զօրսն որք յետոյնէին, և կոչեցին ըղ Նոսա ։ Իբր կոչեալ զիշխանսն մի մի 'ի խորան իւր՝ կտրէր զգլուխս Նոցա. զոր ոչ ոք գիտաց. մինչև զերծեալ ոմն 'ի Նոցանէ անկաւ 'ի բանակն ։ և իբրև ետես վահան թէ յայտնեցան իրքն՝ ազդ արար տնոցեն որք 'ի գարմանէին. որք յարուցեալ յետուստ

կողմանէ՝ փախստական արարին զնո
'ի բերդակոյս կոթ ձորոյ ։ Եւ որք
բուն յետոյնքն էին 'ի դարանի անդ՝
չյարեան իսկ ․ և որք բերդին ընդ
դէմ՝ ելեալ քարամբք և գ ովք կոտո
րեցին զնոսա անխնայ ․ և եղեն փա
խըստական յապահունիս արք Ճ, և
իմացեալ դարանակալացն յարեան
'ի վերայ և կալան զնոսա ։

Արդ՝ 'ի վաղիւն սկսան զօրքն գալ
'ի նոյն տեղի լերինն ․ և վահան յա
ռաջ գնացեալ ասէ՝ իջիք սուտ ամե
նեքեան և թողէք զեր վարսդ արա
ծիլ մինչև յերեկոյն ․ և յերեկոյին ա
կա իջանեմք 'ի վե զօրացն յունաց ․ և
արարին այնպէս ։ Եւ դարանակալքն
դիմեցին 'ի վե նոցա և կոտորեցին զերի
վարսն 'ի զօրացն և փախստական ա
րարեալ զնո ընդ արածանի՝ հանին
'ի քարքէ ․ և զօրացն պարսից տեսեալ
զնոսն՝ աղաղակեցին և ասեն՝ վայ մեզ,
զի կորեաք ․ և եդաւ անուն գաւա
ռին կորեան լերին ։ Եւ վահան առեալ

 զզօրսն

զզօրսն խմբուցանէր 'ի բուն ձորն • և
յարեան գարանակալքն աստի և ան
տի, և 'ի մէջ առեալ կոտորեցին զնո •
ոչ ողորմելով ումեք ։ և հրամայեաց
նչ թողուլ 'ի նոցանէ սոս ի • զի զբու
ցառումն լինիցին պարսից արքային ։
Եւ տեսեալ նոցա զգլուխն միհրա
նայ տանիլ առ թագաւորն և ասէ,
այս մարզպան յորժամ եկն յերկիրս
մեր՝ հակառակեալ զօրքն Ի միլեանս
գնդի խնդրէին, և ոչ կարացին գտա
նել • ապա քանզի յոյժ թշնամիքէին
մեզ՝ 'ի նմա ոչ իշխեցաք գնալ, այլ ձեզ
ընդ ակամբ էաք • և ձեր զօրացդ գն
դի ոչ կայր • ապա կորեցաք զգլուխդ
զայդ և խաղացաք ։ ապա լսեցաք թէ՝
'ի շահաստանսդ եկեալ էք 'ի բօսար
քաղաք, որ է երկիր տափարակ և
դաշտաձև • և գիտեմ որ գնդի խա
ղայք 'ի նմա • առէք զգլուխ բեւոր
դուոյն ձերոյ, և եղիցի ձեզ գնդի յաղ
գէ յադգ ։ Եւ իբրև գնացին արքն
և տարան և զգլուխն միհրանայ առջի

Թագաւորին և ասացին զբանն, խռովեցաւ յոյժ և ամաչեաց զամօթն յաւիտենական ։

Եւ՛ ի միւսում ամին խրոխտացեալ՝ այլ զօրս առաքեաց 'ի տարօն ։

Ի սոյն ամի՝ վանք սրբոյ կարապետին որ յիննակնեանն էր՝ փլաւ. զի շարժ խիստ եղև. զոր մուշեղ իշխանն տարօնոյ տուեալ գանձս բազում հրամայեաց քարակոփս շինել. բայց ոչ ժամանեցին շինել որպէս արժանն էր՝ վասն պատերազմին ։

Ի սոյն ամի շինեաց զսբ̃ կարապետն և ինքն վախճանեցաւ. և կայ առ արծրունեաց 'ի կողմն արևելից Ճակատուն ։

Յետ վախճանելոյն մուշեղայ՝ նըստաւ վահան իշխանն մամիկոնէից տանն, և եկն 'ի վանս գլակայ. և տօն ցնծութեան կատարէին 'ի սբ̃ կարապետն բազում քահանայիւք և եպիսկոպոսօք ։ Եւ ազատեաց եկեղեցւոյն երկոտասան գեօղս. ջնջե

Ճլ Լ

ըով զանձանն յորջունա
կան գինձանէն ։

՛Ի նոյն ամին վախճանեցաւ և երանելին Թոթիկ հայր գլխոյ վանիցն. և կայ ՛ի Թաղման՛ի Հարանց բլուրն, որ է ընդաջմէ եկեղեցւոյն Սբ. աւետեաց բլուրն ։ իբրև ամն ՛ի միջի ։

ՆՃ Նստաւ յաթոռ նորա՝ մանուկն
ստեփաննոս, որդի իշխանին
արծրունեաց ։

Սա բազում ուղղութիւ գործեաց ՛ի գաւառն տարօնոյ. և վերագոյն ընդունէին զնա քան զեպիսկոպոս. զի էր հայր որբոց փառաւոր և տէ֊ վորուք. և ունէր ընդ ձեռամբ իւրով Գ՟ Ճ՟ Ղ՟ Ը՟ կրօնաւորս ։ և վն տէ և պարկեշտ վարուցն՝ ամենեքեան իբրև զաստուածս կարասպետն ընդունէին զնա ։ Սա խնդրեաց ՛ի տէ կայսերէն կապել զբերան գաւառացն որք զբո֊ սաքերան ուտէին. և եղև այնպէս ։ Սա յանդիմանեաց զիշխանն Հարքայ, որ ունէր զկին եղբօր իւրոյ. և ածել

ճղա ՛ի

'ի հաւանութի̃, կտրեաց 'ի կնոջէն և
արար զնա կրօնաւոր. և ետ նմա
շինել եկեղեցիս 'ի Թիլնաւան։
փառք ա̃յ երրորդութեանն ամէն ։

✠

Վասն Երկրորդ. Սան գալստեան
վախթանկայ երեսուն հազարաւ 'ի
տարօն ։ Որև շինեաց զպորպէս քա
ղաք, և զքերդն գահար։ 16

[illegible]արև խոսդեալ Թագաւորն պար
սից 'ի վր̃ յունաց երկրորդ ան
գամ, 'ի միտ ածեալ զմահն մհ
րանայ քեռորդւոյ իւրոյ, առա
քեաց զվախթանկ զնորին հօրեղ
բայրն երեսուն հազարաւ 'ի տարօն։
Որոյ եկեալ յապահունիս՝ նստի
անդ, և առաքէ հարկապահանջս 'ի
հօրք, 'ի հաշուէնք, և 'ի մուշ, խնդրել
'ի նոցանէ զարքունական հարկն. և
գրեցին առն իշխանքն երկրին և ա
սեն, եթէ վահան լիցի քեզ հարկա

Ժբ տու

տու, լինիմք և մեք՝ և տամք զհարկն.
ապա թէ ոչ՝ ամօթալի գ՚ալցես
աստի։ Իսկ որ խրոխտացեալ վախթան
կայ՝ թողու կողմնապետս երկրին
ապահունեաց՝ և սաստիկ քինու վը
քացեալ՝ գայ հասանէ ՚ի գլուխ տա
րօնոյ։ Իսկ իբրև եկն՝ ետես անդ
տեղի մի վայելուչ և արժանի, և սկսաւ
անդ շինել քաղաք և տնկել այգիս և
բուրաստանս. և կոչեաց զքաղաքն
պորպէս՝ յանուն կնոջ իւրոյ պորպէի։
որ ՚ի մեր լեզուս համեղ կոչի։
Իսկ զպարսկական արուեստն փո
խեաց ՚ի գունան մատրանին, զոր հիմն
արկեալ էր սրբոյն սահակայ պար
թևի մեծի։ Իսկ եկեալ ՚ի վր̅ լերինն
տօրոսի՝ շինեաց անդ ամրոց, և անուա
նեաց գահար. զի անդ գահավիժե
ցան ոմանք երկուցեալ ՚ի վայրի գա
զանաց, կարծելով զնոսա թէ ՚ի պար
սից հենծելոցն իցեն։ Ել սա և ՚ի վր̅
գուռզ լերինն, և շինեաց անդ աւան,
և անուանեաց զնա գրգուռ՝ յանուն



որ

որդւոյ իւրոյ Տրդատայ։ Եւ գրեաց թուղթ առ Վռհան, որ ունէր օրինակ զայս ։ Արաշ և հզօր բազկիդ Վահանայ հսկայի սպարապետի՝ 'ի դիցն օգնութեան ողջոյն։ Թէպէտ ընդ մահն Միհրանայ քեռորդւոյն իմոյ տրտմեցաք, սակայն ընդ քո իմաստութիւնարէ յոյժ զարմացեալ եմք ։

Եւ արդ՝ ես վասն սիրոյ և խաղաղութեան եկեալ եմ. եկ և դու առ իս սիրով և երդմնիր ինձ՝ տալ զհարկն դիմոսական և հնազանդ կալ արքային, և այլ ոչ ևս մտանել 'ի չարութիւն վասն նորա. և ապրեսցիս, մնալով 'ի փառս պատուոյ մեծի իշխանութեանց Հայոց։

Ողջ լեր։

Եւ Վահան գրեաց նմա պատասխանի այսպէս։

Սատ և թոյլ անձինդ Վախթանկայ, և խողից քոյոց դասուցդ՝ որք զօրն ողջոյն զաղբս ճաշակեն. Թէպէտ ընդ մահն Միհրանայ խնդացի, բայց զքո անմտութիւն յոյժ լացի։ Որ զնորա

Ձլդ մահն

մահն լուեցեր և զիմ կործանութիւնս ծանեար՝ զոր ես ինձ ած, և իշխեցեր յիմարութե՜ գալ և դու 'ի վերայ երկրիս Հայոց: Որդ՝ եթէ սէր եկիր առնել ընդ մեզ, զկինդ ընդէ՞ր ածեր զհետ. մի թէ որդիս խնդրես յարանց մերոց: Իսկ եթէ սիրոյ պատճառաւ եկիր՝ զքաղաքդ և զամրոցդ ընդէ՞ր շինեցեր: Ով գիտեմ, զի սուտես. և իբրև զշուն կծկիս: որդ՝ մի ընդ մահու փոխեր զկեանս քո. այլ եւ յերկրէս և զնա խաղաղութեամբ յերկիրդ քո: Ապա թէ ոչ՝ զմահն որ ընդ անձն քո անցանելոցէ՝ տեսցէս ամ երկիր: Իսկ բարկացեալ Վախթանկայ ընդ նախատական բանսն Վահանայ՝ ետ 'ի ձեռն ռահանայ այս ՟Զ հազար և առաքեաց 'ի մուշ 'ի մի Վահանայ: Իսկ Վահան իմացեալ զիրսն ( զի ազդեցին նմա ոմանք թէ առաքին գայ ռահան 'ի վերայ քո, ) գիշերագնաց եղեալ հասանէ նոցա 'ի ծմակն, ուր իջեալ կային անհոգ. և յանկարծակի



յար

յարձակեալ ՚ի վն՟ էհար զնա սրով.
և պարսիկքն ոչ կարացին ունել
զերիվարսն. քանզի որդին վահանայ
սմբատ ՚ի մէջ անցեալ գաղտաբար
կորեաց ՚ի նոցանէ չորս հարիւր երի
վարս և անցոյց յայն կոյս սրածանու
՚ի կողմն հաշտենից. և ԲՃ երիվարս
՚ի նոցանէ աճարամման ուղարկեաց
՚ի մբ՟ կարապետն. զի մնէր նոցա
տուն հայրենի. և սմբատն արի՝
անդ էր կնքեցեալ:

Իբր վահանայ տրճեալ զնս մորայն՝
զբազմութիւն կոտորեաց. և մերկացու
ցեալ իշխանն հաշտենից արս ԲՃ՝ ՚ի
մօր անդր ընկղմեաց. զի ունէր առ
ինքն արս վեց հարիւր: Իսկ իշխանն
պարունեաց Բ հազար և Բ հարիւր.
Իշխանն արծրուեաց՝ չորս հազար.
Իշխանն եղնուտի՝ հինգ հազար.
Իսկ ինքն վահան՝ ութ հազար.
Իբր որդի նորա սմբատ՝ վեց հազար.
Ընդ. ամ զօրք ԻԵ Ռ և ութ հարիւր.
Այս ամ զօրք կային ընդ ձեռամբն

ՃԼԶ

վա

վահանայ ։ Բայց բաժանեալ էր զնա, և կողմնապահս թողեալ ամ̃ տեղեաց և առ ինքն կայր յամուրն յայնմիկ ի̃ հազար ։ Եւ բազում ոճիրս գործեց ընդ իշխանն հաշտենից ․ զի սաստապա րեալ կոտրեաց զգլուխն ռահանայ ․ և զօրքն ՚ի փախուստ դարձեալ՝ նե ղելին յոյժ ․ որք յաղաչանս դարձել հարկս խոստացան տալ նոցա ։

Եւ վահան ասէ ցնոսա , տուք ինձ զգլուխն ռահանայ՝ և թողում զձեզ ․ և զօրքն ՚ի բազում տարակուսանս լեալ՝ խնդրէին զգլուխն ռահանայ և ոչ կարէին գտանել ՚ի միջի իւրեանց ։ Ապա կալեալ զորդի նորա զվահ , ե տուն ՚ի ձեռս իշխանին հաշտենից ․ և նա յառաջ խաղացեալ ասէ, կամ տուք մեզ զգլուխն ռահանայ , կամ զգին գլխոյ նորա երեսուն հազար դահե կան ։ որոց անհնարինս մտեալ՝ ե տուն զգին գլխոյն ռահանայ՝ և ին քեանք սկսան փախչիլ՝ Իբրև ետես վահան թէ գնան ամբողջ, նախանձել

զնախանձն ոչ՝ յարձակեցաւ ՚ի վերայ
և սկսաւ կոտորել զնոսա . և նոցա
աղաղակեալ ասեն՝ առ ինչ դարձայք
անդրէն ՚ի պատերազմ մղածել խօսք՝
և կոչեցաւ անուն տեղւոյն առ ինչ ։
Իբրև տարածեալ զնմ ՚ի դաշտի անդ՝
կոտորած սաստիկ գործեցին . յորոց
որք հինգ հարիւր հազիւ կարացին
փախչել . որք երթեալ պատմեցին փախ
թանկայ զամենայն եղեալսն ։ և նորա
բարկացեալ՝ հրամայեաց գլխատել
զնոսա որք դարձան ՚ի պատերազմէն .
և ոչ մնաց որ ՚ի վեց հազարէ անտի ։
Իբրև շարժեալ անդրէն փախթանկայ
՚ի ցասումն բարկութեն վասն վահա
նայ՝ առաքեաց զասուր ութ հազա
րաւ ՚ի վերայ նորա ։ որ եկեալ բանա
կի յեզր մեղտայ և առաքէ առ վա
